[08.11.17] ԵՐԲ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ ԵՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ «Կալավանի վերածնունդը. կայուն զբոսաշրջային հաջողություններ» խորագրով հանդիպում-քննարկումը:

[09.11.17] ՀԱՅ ԵՎ ԼԵՀ ԻՐԱՎԱԲԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Լեհաստանում հայերին թագավորական արտոնություններ տրամադրելու 650-ամյակին:

[09.11.17] ԵՊՀ-Ն ՆԵՐԿԱՑԱՑՐԵԼ Է ԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Նոյեմբերի 7-ին ԵՊՀ մի քանի հարյուր ուսանողներ դասադուլ են հայտարարել՝ իրենց անհամաձայնությունը հայտնելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, որով վերացվում է տարկետումը:

[09.11.17] «ՓՐԿՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ»-Ը ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ

Նոյեմբերի 8-ին Մայր բուհի մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Փրկության քարտեզ» ֆիլմի ցուցադրությունը:

[09.11.17] ՊԱՏՄԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պատմագետների միության անդամների ընդհանուր համագումարը:

[13.11.17] ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՄՈՆԹԵՐ 60-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 11-ին «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանում տեղի ունեցավ Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի 60-ամյակին նվիրված միջոցառում:

[13.11.17] ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՍՈՑԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Սոցիալական աշխատանքի պրակտիկայի գիտական ընդհանրացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով միջազգային գիտաժողովը:

[14.11.17] ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 13-ամյակին նվիրված միջոցառում:

[15.11.17] ԱՄՓՈՓՎԵՑ ԲԱՆԱՎԵՃԻ ՄԻՋՐՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ուսանողական խորհրդի բանավեճի ակումբի միջբուհական առաջնության եզրափակիչ խաղը:

[15.11.17] ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ՈՒՍԱՆՈՂԸ ՃԱՆԱԶՎԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Էդիկ Հարությունյանը նոյեմբերի 4-10-ը մասնակցել է Եգիպտոսի Շարմ Էլ Շեյխ քաղաքում տեղի ունեցած Համաշխարհային երիտասարդական ֆորումին:

[16.11.17] ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԱՐԶՈՒՆՔՆԵՐ ԳՐԱՆՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ամփոփվեց «Հաղորդակցությունից համագործակցություն» խորագրով եռօրյա սեմինար-դասընթացը:

[16.11.17] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀՀ ԱԺ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի նախաձեռնությամբ մագիստրանտներն այցելեցին ՀՀ Ազգային ժողով:

[16.11.17] «ՎԱՅԼԱՎ ՀԱՎԵԼ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԽԻՂՃ». ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ գրադարանի մասնաշենքի նախասրահում բացվեց Չեխիայի Հանրապետության Թավշե հեղափոխության 28-րդ տարեդարձին նվիրված ցուցահանդես:

[17.11.17] ՉԻՆԱՐԵՆՈՎ ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՑԹԻՆ ՀԱՂԹԵԼ Է ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ

Նոյեմբերի 16-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում անցկացվեց «Չինարենով ասմունքի մրցույթը»:

[17.11.17] ԵՊՀ-ՈՒՄ ԷՐ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ

Համալսարանականների հյուրն էր Մոսկվայում Իսպանիայի Թագավորության գլխավոր հյուպատոս Իստիար Տաբոադան:

[17.11.17] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ «ԳՐԱՎԵԼ ԷՒՆ» ԵՊՀ-Ի ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Ուսանողների միջազգային օրվա առթիվ ԵՊՀ-ում իրականացվեց «Համալսարանը դեկավարում են ուսանողները» կամ «Ուսանողական ռեկտորատ» ծրագիրը:

[17.11.17] ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ՝ ԲԱՐՁՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Ուսանողների միջազգային օրը Մայր բուհում ամփոփվեց երգչուհի Սոնա Ռուբենյանի և հաղորդավար, հումորիստ, երաժիշտ Գարիկ Պապոյանի համերգային ծրագրով:

[20.11.17] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԿՄՎԻ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻՑ

Այսօր ԵՊՀ պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը հյուրընկալել էր Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի պատվիրակությանը:

[20.11.17] ՔՆՆԱՐԿՎԵՑ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՈԼՈՐՏԵՐՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ Ուրալի դաշնային համալսարանի պատվիրակության հանդիպումը Մայր բուհի սոցիոլոգիայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, կենսաբանության ֆակուլտետների դեկանների հետ:

[20.11.17] ԲԱՔՎԻՑ՝ ԱՄՆ. ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այսօր ԵՊՀ-ում համալսարանականները հանդիպեցին ամերիկահայ գրող, դասախոս, իրավ. գիտ. թեկնածու, հասարակական գործիչ Աննա Աստվածատուրյան Թերթրոթի հետ:

[22.11.17] ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՓՈՐՁ ՀԱՋՈՂՎԱԾ ՍՏԱՐՏԱՓ ԹԻՄ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում մեկնարկեց «Հաջողված ստարտափ թիմեր. ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խորագրով եռօրյա սեմինար-դասընթացը:

[23.11.17] ԵՊՀ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԸ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ ՈՒՆԻ

ԵՊՀ Լ. Ազգալոյանի անվան մարտական պատրաստության ակումբը կղեկավարի Ապրիլյան պատերազմի հերոս, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Գևորգ Մանուկյանը:

[23.11.17] ՔԻԼԻԱՆ ՎԱՎՈՒ. «ԵՐԲԵՄՆ ՄԵՋ ՀԵՆՑ ՄԻ ՔԱՅԼ Է ՊԵՏՔ ՍԹՐԵՄՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Ամստերդամի VU համալսարանի դոկտոր, միջազգային HR մասնագետ Քիլիան Վավուի հետ:

[23.11.17] ՀՕՏ-Ը ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ

ԵՊՀ-ն պարգևատրել է «Հայ օգնության ֆոնդ» բարեգործական կազմակերպությանը՝ Մայր բուհի կրթագիտական գործունեությանը ցուցաբերած մշտական և նշանակալի աջակցության համար:

[24.11.17] ԴԱՏԱՐԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԲԱՎԱՐԱՐԵԼ Է ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՅՑԸ

2016 թ.-ին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի մի շարք ուսանողների ակտիվ մասնակցությամբ նախաձեռնվել և հայց է ներկայացվել ընդդեմ «Յուքում» ՄՊԸ-ի:

[27.11.17] ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԻՆԻ ԲԱԶՄԱԲԵՎԵՈՒ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ընդունեց Լիբանանա-կանադական համալսարանի պատվիրակությանը:

[27.11.17] ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ 2016 թ.-ի Ապրիլյան քառօրյա պատերազմում մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձի փոխհատուցման հավաստագրերի հանձնումը:

[27.11.17] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԵԾ ԵՐԳԱՀԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳԻՆ

Նոյեմբերի 25-ին Ա. Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ երգահան Ալեքսեյ Հեքիմյանի 90-ամյակին նվիրված համերգ, որին մասնակցեցին նաև ԵՊՀ մշակույթի կենտրոնի սաները:

[28.11.17] **ԻՆՉՊԵՐՍ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**
Այսօր IBM ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնում (ISTC) տեղի ունեցավ «Work/Life Balance» խորագրով սեմինար: Այս անգամ ուսանողների հյուրը «Fimetech» ընկերության հիմնադիր Գոր Վարդանյանն էր:

[28.11.17] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ**
Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականները հյուրընկալեցին Արցախի հերոս, ՀՀ ԶՈՒ գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանին:

[28.11.17] **ՀԵՐՈՍԸ ԿԴԱՌՆԱՐ 50 ՏԱՐԵԿԱՆ**
Այսօր Եռաբլուր պանթեոն՝ զոհված սփյուռքահայ ուսանող-ազատամարտիկ Մհեր Զուլհաճյանի շիրիմին էին այցելել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

[28.11.17] **ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ «YEREVAN BOOK FEST»-ՈՒՄ**
Նոյեմբերի 24-26-ը տեղի ունեցավ գրքի երևանյան առաջին փառատոնը, որտեղ ներկայացված էին նաև ԵՊՀ հրատարակչության կողմից վերջին տարիներին հրատարակված գրքերը:

[29.11.17] **ՆՇԵՑԻՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՖԻԼՄԵՐԻ ՍԻՐՎԱԾ ԵՐԳԵՐԸ**
Նոյեմբերի 28-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Ճանաչված ֆիլմերի սիրված երգեր» խորագրով ռետրո համերգը:

[29.11.17] **ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ՝ «ELSA DAY»-Ի ՄԱՍՆԱԿԻՑ**
Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արդարադատության մատչելիություն» խորագրով քննարկում:

[29.11.17] **ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**
Այսօր «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան» հիմնադրամի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Դոկտորանտուրա» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը:

[29.11.17] **ՄՐՑՈՒՄ ԷՐՆ ՏԱՐԲԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**
Այսօր ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում անցկացվեց «О России с любовью» խորագրով միջոցառում, որի շրջանակում կազմակերպվեց նաև ասմունքի մրցույթ:

[30.11.17] **ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԱԿԱՆԱՎՈՐ ԼԵԶՎԱԲԱՆԻՆ**
Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Աբեղյանական ընթերցումներ» խորագրով հանրապետական գիտաժողովը:

[30.11.17] **ԿԱՅԱՑԱՎ ԵՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ**
Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ գիտխորհրդի նիստ՝ օրակարգային 9 և ընթացիկ մի շարք հարցերով: Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր պարզևատրումներին, մի շարք համալսարանականներ արժանացան մեդալների, շնորհակալագրերի ու հավաստագրերի:

[01.12.17] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ**
Նոյեմբերի 30-ին տեղի ունեցած ԵՊՀ գիտական խորհրդի նիստի օրակարգային հարցերի շրջանակում մի շարք համալսարանականներ արժանացան մեդալների, շնորհակալագրերի ու հավաստագրերի:

[01.12.17] **«ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆ ԵՆ»**
Նոյեմբերի 30-ին ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի ունեցավ «Էստյոդներ: Լուսանկարչության բնավորություն» խորագրով հանդիպումը լուսանկարիչ Հայկ Բարսեղյանի հետ:

[01.12.17] ՀԱՄԱԺՈՂՈՎՐ ՀԱՄԱԽՄԲԵԼ Է ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Ուսանողական ինքնակառավարում» 4-րդ ամենամյա ուսանողական համաժողովի բացման արարողությունը:

[01.12.17] ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ «Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում» գրքի շնորհանդեսը:

[04.12.17] ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԵՑԻՆ ՈՒ ԲԱՆԱՎԻՃԵՑԻՆ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Դեկտեմբերի 2-4-ը ԵՊՀ-ում անցկացվեց «Ձևավորելով հարևանությունը: Բանավիճի՛ր և բանակցի՛ր հանուն ժողովրդավարության, մասնակցության և բազմակարծության» խորագրով մոդելավորում-խաղերի և դասընթացների շարքը:

[04.12.17] ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՄԱՆՆ ՈՒՂՂԱՄՈՒ ԱՅՑԵՐԸ

ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը շարունակում է կազմակերպել ավագ դպրոցների աշակերտների այցերը դեպի Մայր բուհ, ինչպես նաև բուհի դասախոսների դասախոսությունները ավագ դպրոցներում:

[05.12.17] ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽՐԱԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Այսօր ԵՊՀ-ի և «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ի միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր:

[05.12.17] ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՆՈՐ ԴԵԿԱՆ ՈՒՆԻ

Այսօր Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստում 21 կողմ և 1 անվավեր ձայների հարաբերակցությամբ ֆակուլտետի դեկան է ընտրվել թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

[06.12.17] ԱՎԱՐՏՎԵՑ «ԻՆՉ, ՈՐՏԵՂ, ԵՐԲ» ԽԱՂԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ԵՊՀ Պալեստինների անվան դահլիճում տեղի ունեցավ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի միջբուհական առաջնության եզրափակիչ փուլը:

[06.12.17] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 5-ին ԵՊՀ մի խումբ ուսանողներ այցելեցին «ՎիվաՄեյ-ՄՏՍ»-ի կենտրոնական գրասենյակ:

[06.12.17] ԻՆՔՆԱՏԻՊ ԼԻՆԵԼՈՒ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՑ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Գործարար իմիջ և բիզնես էթիկետ» խորագրով երկօրյա սեմինար-դասընթացը:

[06.12.17] ԵՊՀ ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՆՈՐ ԴԵԿԱՆ ՈՒՆԻ

Այսօր Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդի նիստում միաձայն ֆակուլտետի դեկան է ընտրվել ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ներկարարյանը:

[07.12.17] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ «PICSART» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐՆ ԷՐ

Այսօր ԵՊՀ ուսանողական խորհրդի «Հաջողության նախագիծ» ծրագրի շրջանակում հյուրընկալվել էր «PicsArt» ընկերության համահիմնադիր Արտավազդ Մեհրաբյանը:

[07.12.17] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ

Դեկտեմբերի 6-ին ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Հին հայկական տարազը» թեմայով զրույց-դասախոսություն:

[07.12.17] ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՅՑԵՐԸ

ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը շարունակում է Մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների այցելությունները մարզային դպրոցներ:

[07.12.17] ԵՊՀ ԹԻՍԸ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Է ԳՐԱՆՑԵԼ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ ԵՎ ՃԱՆԱԶՎԵԼ ԼԱՎԱԳՈՒՑՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 2-3-ը ԵՊՀ թիմերը Թբիլիսիում մասնակցել են «ACM-ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի հյուսիսարևելյան եվրոպական տարածաշրջանի կիսաեզրափակիչ փուլին:

[08.12.17] ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դեկտեմբերի 7-8-ը ԵՊՀ-ում անցկացվեց Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական երկօրյա նստաշրջանը:

[08.12.17] ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ԱՄՓՈԹԵԼ ԵՆ ԱՆՑԱԾ ՈՒՍՏԱՐԻՆ

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես բոլոր ֆակուլտետներում տեղի են ունեցել գիտխորհրդի տարեկան ամփոփիչ նիստեր, որոնց ընթացքում դեկանները հանդես են եկել հաշվետվությունների ներկայացմամբ:

[08.12.17] ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏ ԿՈՆՑԱԿԻ-ԳԻՆՈՒ-ՕՂՈՒ ԿՈՄԲԻՆԱՏ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողները շարունակում են այցերի շարքը տարբեր կազմակերպություններ:

[08.12.17] ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ-ում հյուրընկալվել էին հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն Արթուր Ալեքսանյանը, աշխարհի չեմպիոններ Արսեն Զուլֆալալյանն ու Մաքսիմ Մանուկյանը:

[11.12.17] «DOCMEN» ՆԱԽԱԳԻԾԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Եվրամիության «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «DOCMEN» նախագծի ուղղությամբ տարվող աշխատանքները շարունակվում են:

[11.12.17] ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՂԹԵԼ ԵՆ 2 ՄՐՑՈՒՑԹՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 9-10-ը Երևանի «Դարլթրի Բայ Հիլը» հյուրանոցում անցկացվեց «Բանկային իրավունքի դատախազ» մրցույթի բանավոր փուլը:

[12.12.17] ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԱՄՓՈԹԵՑ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր տեղի ունեցավ արդեն ավանդական դարձած ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան գիտաժողովը:

[13.12.17] ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ ՀՈՒՆԳԱՐ ՏԵՍԱԲԱՆԻՑ

Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մուլտիմեդիա կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում հունգար տեսաբան Աննա Միլադիի հետ:

[13.12.17] ԵՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԷՐ «ԲԱՐՁՐԱԿՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը հանդիպեց հայաստանյան բուհերի ուսանողական կառույցների և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

[13.12.17] ԲԻԶՆԵՍ ԽԱՂ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի ունեցավ բիզնես խաղ գինեգործության շուկայի վերաբերյալ:

[14.12.17] **ԱՊԱԳԱ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ ՅՈՒՐԱՅՆՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողների համար վարպետության դաս անցկացրեց Վրաստանի համաժամանակյա (синхрон) թարգմանիչների (գիտաժողովային) միության հիմնադիր Գոգա Ասկուրավան:

[14.12.17] **50 ՏԱՐԻ ՄԵՋ ՀԵՏ ԵՎ ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Միեր Ջուլիաճյան-50» խորագրով միջոցառումը:

[14.12.17] **ԱՄՓՈՓՎԵՑ «ՈՒՆԻՎԵՐՍԻՏԻՏԱՆ-2017»-Ը**

«Ունիվերսիտադա» միջբուհական մարզամշակութային և ինտելեկտուալ մրցույթում ԵՊՀ-ն զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

[15.12.17] **ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿԸ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ընկերության՝ 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ընդլայնված նիստը:

[18.12.17] **ՆԱՏՕ-Ի ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՑԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՊՀ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում համալսարանականներին հյուրընկալվել էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոգ Գոթեմոլլերը:

[18.12.17] **ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ԵՂԵՌՆԻՆ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԻՆ**

Դեկտեմբերի 15-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանությունը և մեծ տերությունների դիրքորոշումը» թեմայով դասախոսություն:

[18.12.17] **ԱՐԱԲԵՐԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇՎԵՑ ԵՊՀ-ՈՒՄ**

Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի Երկանյանների անվան լսարանում տեղի ունեցավ Արաբերենի միջազգային օրվան նվիրված միջոցառում:

[18.12.17] **ԹԵՑԱՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «TIME FOR TEA» ԾՐԱԳՐԻՆ**

Դեկտեմբերի 15-ին «The Loft» ժամանցի և զարգացման կենտրոնում ԵՊՀ ուսանողները մասնակցեցին Թեյի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

[18.12.17] **ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՆՔՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷՐՆ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ «Կանանց, խաղաղության և անվտանգության վերաբերյալ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացում» խորագրով աշխատաժողովը:

[18.12.17] **«ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ՀԿ-ՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԿԳ փոխնախարարի հանդիպումը հայաստանյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

[19.12.17] **ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԾԱՎԱԼՎԻ ՄՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Այսօր ԵՊՀ-ի և «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն (ՀԱԲԼԾԿ)» ՊՈԱԿ-ի միջև համագործակցության հուշագիր ստորագրվեց:

[19.12.17] **ԱՊԱԳԱ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ՊՆ ներկայացուցիչ, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դասախոս Մերոբ Մուջյանի հետ:

[20.12.17] ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում հյուրընկալված արտասահմանյան հյուրերը և գործուղումից վերադարձած ԵՊՀ ուսանողները ներկայացրին իրենց գիտական հետազոտությունների արդյունքները:

[21.12.17] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՆՈՐ ՄԱՏՈՒՑՄԱՍԲ

Այսօր ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության անգլալեզու ատլասի և Օսմաներենի բուհական դասագրքի շնորհանդեսը:

[21.12.17] ԵՊՀ-Ն ԱՄՓՈՓԵՑ ՏԱՐԻՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական խորհրդի՝ այս տարվա վերջին նիստը, որում ընդգրկված էին օրակարգային ինը և մեկ ընթացիկ հարցեր:

[22.12.17] ՆԱԽԿԻՆ ՈՒԳԸ-ԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

Դեկտեմբերի 21-ին կայացած գիտխորհրդի տարեվերջյան նիստի ընթացքում մի շարք համալսարանականներ արժանացան պարգևների և շնորհակալագրերի:

[22.12.17] ԵՐՎԱՆԴ ՂԱԶԱՆՉՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ ԵՊՀ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ

Դեկտեմբերի 21-ին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ՝ 80-ամյա հոբելյանի առթիվ հայ անվանի բեմադրիչ, թատերական գործիչ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանը պարգևատրվեց ԵՊՀ ոսկե հուշամեդալով:

[25.12.17] ԿԱՅԱՑԱՎ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստը, որը նախագահում էր խորհրդի նախագահ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

[26.12.17] ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽՇԱՀԱՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄՆ Է

Դեկտեմբերի 26-ին ԵՊՀ էր այցելել Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտաքին գործերի նախարարության քաղաքական և միջազգային հետազոտությունների ինստիտուտի պատվիրակությունը:

[26.12.17] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ ՄՐՑԱՆԱԿ Է ՍՏԱՑԵԼ «ԱՄԵՆԱԽԵԼԱՑԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾՈՒՄ

«Ամենախելացին» հեռուստանախագծում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Արամ Դավաթյանը հաղթող է ճանաչվել «Կրոն» անվանակարգում:

[27.12.17] ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Այսօր ԵՊՀ-ի և «Նատֆուր» ՓԲԸ-ի միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր:

[31.12.17] ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Մեր հասարակության, բնականաբար, նաև համալսարանականներիս համար Ամանորն ամենասիրված տոներից մեկն է: Տոն, որի ընթացքում հնչում են սրտառուչ բարեմաղթանքներ, տոն, որ լի է բարի հույսերով ու ապրումներով, նպատակների իրականացման ակնկալիքով...

[09.01.18] ԵՊՀ-ՈՒՄ ԴԱՍԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՑ

Մայր բուհում առկա ուսուցման համակարգի սովորողների համար քննաշրջանը սկսվել է հունվարի 8-ից և կանցկացվի մինչև հունվարի 27-ը:

[12.01.18] ԿԹՈՂԱՐԿՎԻ «ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ» ՀՈՒՇԱԴՐԱՄ

ՀՀ կենտրոնական բանկը հայտարարել է մրցույթ «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» հուշադրամի էսքիզների ընտրության համար:

[19.01.18] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՆԻ

Ուսանողական խորհրդի նախագահության հերթական նիստում ուսանողական կառույցի նախագահ ընտրվեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Դավիթ Ափոյանը:

[23.01.18] ԵՊՀ-ՈՒՄ ԲԱՅՎԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՍԱՐԱՆ

Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ Արաբական Միացյալ Էմիրությունների լսարանի պաշտոնական բացումը, որին ներկա էր ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ և լիազոր դեսպան Ջասիմ Մուհամմադ Ալ Կասիմին:

[29.01.18] ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՀՐԱՆՏ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆ

Այսօր ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Հրանտ Հակոբյանի անվան լսարանի բացման հանդիսավոր արարողությունը:

[31.01.18] ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՊՀ

Այսօր Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մարգսյանն այցելեց հարազատ բուհ և հանդիպեց համալսարանականների հետ:

[31.01.18] ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԴՈՆԵՐԸ ԲԱՅ ԵՆ ԱՊԱԳԱ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Այս տարի նույնպես շարունակվում են Երևանի մի շարք ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների այցերը Երևանի պետական համալսարան:

[02.02.18] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԵՊՀ ռեկտորն այսօր հյուրընկալել էր ՀՀ-ում (նստավայրը՝ Մոսկվա, ՌԴ) Մեքսիկայի Միացյալ Նահանգների դեսպան Նորմա Բերտա Պենսադո Մորենոյին:

[02.02.18] ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԳԱ ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՊՀ-ի և «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում մագիստրատուրայի 8 ուսանողի ուսման վճարը կփոխհատուցվի «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի կողմից:

[05.02.18] «ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ, ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ». ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ը ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի ունեցավ «Հոգեւոցիալական ծառայությունը ուռուցքաբանության ոլորտում» խորագրով սեմինար-քննարկումը:

[05.02.18] ՄԱՐԶԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴՊՈՒՄԸ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԷՐ

Փետրվարի 2-ին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ներկայացուցիչները հանդիպեցին Վանաձորի ավագ դպրոցների աշակերտների հետ:

[06.02.18] ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԷՐ

Փետրվարի 5-ին ՀՀ ԱԺ-ում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որին մասնակցել են նաև ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի ղեկավարն ու աշխատակիցները:

[07.02.18] ԵՊՀ-Ն ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ Է

Այսօր ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչները այցելեցին Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն:

[07.02.18] ԲԱՑ ԴՈՆԵՐԻ ՕՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում բաց դռների օր էր, որի շրջանակում ավելի քան 150 ապագա դիմորդներ հյուրընկալվել էին Պատմության ֆակուլտետում:

[07.02.18] ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՑԱՐՆԾԱՅԱԾ ԳԻՐՔԸ՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԳՐՔԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Փետրվարի 6-ին ԵՊՀ հրատարակչության լույսընծայած «Հովհաննես Շիրազ, գիրք Բ» գրքին շնորհվել է Հայաստանի գրողների միության նախագահության մրցանակ:

[09.02.18] ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Փետրվարի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ԵՊՀ մշակույթի կենտրոնի և Գևորգյան հոգևոր ճեմարանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Սուրբ Վարդանանց տոնին նվիրված միջոցառում:

[09.02.18] ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՄՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում ԵՊՀ ասպիրանտներին, ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվեց «FAST» հիմնադրամի՝ 2018-2019 ուստարվա համար նախատեսված կրթաթոշակային ծրագիրը:

[09.02.18] ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում տեղի ունեցավ Իսլամական հեղափոխության 39-րդ տարեդարձին նվիրված սեմինար-քննարկում:

[12.02.18] ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂ ԲԱՐՁՐ ԱՐԴՑՈՒՆՔ Է ԳՐԱՆՑԵԼ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՑՈՒՄ

Փետրվարի 6-ին Մոսկվայի պետական համալսարանում (МГУ) տեղի է ունեցել Պարսկերենի 14-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել է Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության բաժնի ուսանող Հայկ Ղազարյանը:

[12.02.18] ԵՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԼՍԱՐԱՆ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ «Հայաստան-Իրան բարեկամության լսարան»-ի բացման հանդիսավոր արարողությունը:

[12.02.18] ԵՊՀ-Ի ԳՈՐԾԸՆԿԵՐ ԹԲԻԼԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Համալսարանի 100-ամյակին նվիրված տոնակատարություններին մասնակցել է նաև ԵՊՀ պատվիրակությունը՝ ի դեմս ռեկտոր Արամ Սիմոնյանի:

[13.02.18] ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի հաղթողների մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

[14.02.18] ԻՆՉՊԵՍ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 13-ին ԵՊՀ «Հովհաննես Ադամյան» սրահում տեղի ունեցավ «Ինտերնետային կայքի բովանդակության կառավարում. օգտատիրոջ հայացք ներսից» խորագրով դասընթացը:

[14.02.18] ԵՊՀ ՌՈՍՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ԿԱՆՎԱՆԱՓՈԽՎԻ

Այսօր տեղի ունեցավ գիտական խորհրդի հերթական նիստը՝ օրակարգային 6 և ընթացիկ հարցերով:

[14.02.18] ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆ ԸՆԴԼԱՑՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Սորբոնի համալսարանի տեղեկատվական և հեռահաղորդակցության բարձրագույն դպրոցի ժուռնալիստիկայի բաժնի պատվիրակության ղեկավար Էդվե Դեմեյիին:

[15.02.18] ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՄԱԿԱՆԴՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ «ERASMUS+»-ԻՑ

Այսօր ԵՊՀ-ում էին համախմբվել հայաստանյան և արտասահմանյան մի շարք բուհերի ներկայացուցիչներ «Erasmus+»-ի հերթական նախագծի քննարկման համար:

[16.02.18] ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐԸ՝ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԵՐԵՔ ԳՐՔԵՐՈՒՄ

Փետրվարի 15-ին ԵՊՀ Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «Հայ ինքնությունը օտարների աչքերով», «Հայն ու Հայաստանը օտարի աչքերով» և «Հայը օտարների ընկալմամբ» գրքերի շնորհանդեսը:

[20.02.18] ԵՊՀ-ՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ Է ԳՈՐԾԵԼՈՒ

Այսօր ԵՊՀ գրադարանի ճեմասրահում տեղի ունեցավ տոնական միջոցառում՝ նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին և «Արցախի տուն» գիտակրթական և մշակութային ուսանողական կենտրոնի բացմանը:

[20.02.18] ԲԱՅ ԴՈՆԵՐԻ ՕՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում բաց դռների օրվա շրջանակում Երևանի 9 ավագ դպրոցների շուրջ 130 աշակերտներ հյուրընկալվել էին Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում:

[21.02.18] ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ԱՊԱԳԱ ՍՊԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրեն Վահագն Վարազյանը հանդիպել է այն ուսանողների հետ, ովքեր ընտրել են ուսումնառությունից հետո ՀՀ զինված ուժերում որպես սպաներ ծառայության անցնելու տարբերակը:

[21.02.18] ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ-ում բաց դռների օրվա շրջանակում Երևանի մի քանի ավագ դպրոցների շուրջ 60 աշակերտներ հյուրընկալվել էին Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում:

[21.02.18] ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԲԽՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻՑ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արտասահմանյան գրականություն» առարկայի դասավանդման ժամաքանակների փոփոխության վերաբերյալ քննարկումներին նվիրված ասուլիս:

[21.02.18] ԵՊՀ-Ն ԸՆԴԱՅՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալել էր ՀՀ-ում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աժեմար դե Մենդոսա Սանկտուսին:

[22.02.18] ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ ԱՊԱԳԱ ՍՏԱՆԵՐԻՆ

Այսօր մասնագիտական կողմնորոշման նպատակով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ էին այցելել Երևանի հ. 114, հ. 148, հ. 198, հ. 94, հ. 195, հ. 118 և հ. 29 ավագ դպրոցների աշակերտները:

[23.02.18] «ERASMUS»-Ը ԿԱԶՄԱԿՑԻ ԲԻՈԱՐՏԱԴԻԱՆՔԻ ՈԼՈՐՏԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Փետրվարի 5-9-ը Հունաստանի Սալոնիկ քաղաքում մեկնարկել է «Erasmus+KA2»-ի «Բիոարտադրանքի գիտությունների և տեխնոլոգիաների հայկական գերազանցության ցանցի ստեղծում» ծրագիրը:

[23.02.18] ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Այսօր Երևանի հ. 148, հ. 195, հ. 189, հ. 65, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ և Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցների աշակերտները հյուրընկալվել էին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում:

[23.02.18] ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴՈՆԵՐԸ ԲԱՅ ԵՆ ԱՊԱԳԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր Երևանի և մարզերի ավագ դպրոցների բարձր դասարանցիները մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելել էին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ:

[26.02.18] ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում Սենշյու համալսարանի պատվիրակությունը հանդիպեց ճապոներեն ուսումնասիրող ուսանողների հետ:

[26.02.18] ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԲՈՒՀԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԻՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում հայաստանյան բուհերի ներկայացուցիչները քննարկեցին Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) ներդրմանն առնչվող մի շարք հարցեր:

[27.02.18] ԵՊՀ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆՆ ՌԻՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԵՋԱԿԻ ԵՆ ՈՂՋ ԱՐԵՎԵԼՑԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում այսօր տեղի ունեցավ Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի պաշտոնական բացումը:

[27.02.18] ԵՊՀ-Ն 5 ՏԱՄՆՑԱԿ ԳԻՐՔ ՆՎԻՐԵՑ ՄՈՍՈՒԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Այսօր Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի կազմակերպած միջոցառման ընթացքում համալսարանի ղեկավարությունը ԵՊՀ-ի կողմից հրատարակված՝ տարբեր լեզուներով մի քանի տասնյակ գիրք նվիրեց Մոսուլի համալսարանի գրադարանին:

[27.02.18] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԵՐԸ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵՑԻՆ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ ՀԻՇՍԱԿԻՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Երիտասարդ միջազգայնագետների ակումբ»-ի նախաձեռնությամբ այսօր ֆակուլտետի շուրջ 300 ուսանողներ դեկան, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի հետ 1988 թ.-ի սումգայիթյան ջարդերի 30-րդ տարելիցի կապակցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու:

[27.02.18] ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱՎ ԵՊՀ ԴԱՄԱՌՈՄՆԵՐԻ ԵՎ ԲՐԵՄԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՑԵՍՈՐ ՌՈԼՖ ՔՆԻՊԵՐԻ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԽՆԴՐԱԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում անցկացվեց իրավական խնդիրների կազմման և լուծման մեթոդիկային նվիրված սեմինար-քննարկում և «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք (լուծումներով)» ուսումնամեթոդական ձեռնարկի շնորհանդեսը:

[27.02.18] ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ ՄԱՐԶԱԲՆԱԿ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

[28.02.18] ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆԻՐ 5 ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՄԱՌՈՄՆԵՐ ԵՆ

Այսօր ՀՀ Ազգային ժողովը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել է Բարձրագույն դատական խորհրդի 5 անդամներին:

[28.02.18] ԱՇԿԱԵՐՏՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում բաց դռների օր էր ապագա դիմորդների համար:

[01.03.18] «ԲՈՂՈՔԵԼՈՒ ԵՎ ԴԺԳՈՀԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ՔԱՅԼՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋ». ԵՊՀ ՖՐԱՆԿՈՖՈՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ ՄԵԾ ԾՐԱԳՐԵՐ ՌԻՆԻ

Յուրաքանչյուր տարի՝ մարտի 20-ին, ի նշանավորումն 1970 թ.-ի մարտի 20-ին Նիամեյում ստորագրված համաձայնագրի՝ տոնվում է Ֆրանկոֆոնիայի միջազգային օրը: Ֆրանկոֆոն մեծ ընտանիքի մի մասը կազմող ակտիվ համալսարանականների՝ ի դեմս Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի *Մարգարիտա Ավդալյանի* նախաձեռնությամբ ստեղծվել է ԵՊՀ ֆրանկոֆոնների ակումբը:

[01.03.18] «ՔԱՅԼՈՂ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ», ԱՊԱԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՆ ՌԻ ԱԿՏԻՎ ՌԻՍԱՆՈՂԸ...

Դավիթ Աբելյանը սովորում է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության բաժնի 3-րդ կուրսում: Ընկերների շրջանում հայտնի «քայլող հանրագիտարանն» իր վրա առաքելություն է վերցրել մարդկանց ապահովելու հետաքրքիր տեղեկատվությամբ: Բացի դրանից՝ Դավիթը ակտիվ ներհամալսարանական գործունեություն է իրականացնում: Զբաղվում է նաև նկարչությամբ և պատրաստվում է իր նկարները ցուցադրել համալսարանում:

[02.03.18] ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅԵՐԸ ԳՐԱՎԵՑԻՆ «ՉԻՆԱՍՏԱՆԸ». ՊԱՏՄՈՒՄ Է ՎԱՀՐԱՍ ԿԱԺՈՑԱՆԸ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաթոյանի հետ:

[02.03.18] ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԹԵՔԱՀԱՐԹԱԿՆԵՐ ԿՈՒՆԵՆԱ. ՌԵԿՏՈՐ ԱՐԱՍ ՄԻՍՈՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտոր Արամ Սիմոնյանի և ուսանողների հանդիպումը:

[03.03.18] ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ԿՕՋՏՎԵՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԵՐԻՑ

Այսօր անցկացվեց ԵՊՀ ամենամյա օլիմպիադայի 1-ին փուլը:

[05.03.18] «ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

«YSU Confessions (ԵՊՀ խոստովանություններ)» ֆեյսբուքյան էջն արդեն ունի ավելի քան 6.000 հետևորդ և ավելի քան 7.000 գրառում:

[05.03.18] ԳՄՕ՝ ԳԵՆԱՅԻՆ ԻՆՏԵՆՏԻՎԱՅԻ ՀՐԱՇՔ, ԹԵ՝ ՉԱՐԻՔ. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ԱՐՄԵՆ ԹՈՉՈՒՆՅԱՆԻՑ

Գիտության ցանկացած ձեռքբերում կարող է մարդկության առաջընթացի նոր հնարավորություն ընձեռել, բայց այն կարող է նաև վտանգավոր տարրեր պարունակել մարդկանց առողջության և կենսամիջավայրի համար: Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմները (ԳՄՕ) այդ ձեռքբերումների շարքին են պատկանում:

[06.03.18] «ԴԵՂԱՏՈՍՄԵՐՈՎ ԴԵՂԵՐԻ ՎԱՃԱՌՔՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՍԱԿԱՅՆ ԼԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՎ». ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ

Մարտի 1-ից ՀՀ քաղաքացիները Հայաստանում գրանցված մոտ 4.700 անուն դեղից դեղատոմսով կարող են գնել 2.700-ը: Պարտադիր պահանջը գործում է հակաբիոտիկների, հորմոնային պրեպարատների և կոդեին պարունակող դեղերի, հուլիսի 1-ից՝ բոլոր ներարկումային և հակառետրոսային դեղերի, իսկ հոկտեմբերի 1-ից՝ դեղատոմսով դուրս գրվող մնացած բոլոր դեղերի նկատմամբ:

[06.03.18] ԱՊԱԳԱ ԱՐԱԲԱԳԵՏՆԵՐՆ ԱՄԷՆՈՒՄ ԵՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԱԿԱՐԴԱԿ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՊՀ-Ի ԵՎ ԴՈՒԲԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Մարտի 2-9-ը ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ներկայացուցիչներն Արաբական Միացյալ Էմիրություններում մասնակցում են դասախոսությունների, սեմինարների ու ծանոթանում արաբական մշակույթին:

[06.03.18] ՍԿՑՈՒՏԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻՔԻՐ ԶԳՎՈՂ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԶԱՊԵՆ ԵՍԱՅԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՑԱՆՔԸ

Այսօր Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ ականավոր գրող, հասարակական-քաղաքական գործիչ Զապել Եսայանի ծննդյանի 140-ամյակին նվիրված միջոցառում, որն ուղեկցվեց գրողի երկերի ցուցադրությամբ:

[07.03.18] ԵՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Համալսարանական արաբագետները շարունակում են այցելություններն Արաբական Միացյալ Էմիրությունների համալսարաններ: Մասնավորապես ԵՊՀ ներկայացուցիչները մասնակցել են ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբիում իրականացվող հանդուրժողականությանը նվիրված գիտաժողովին, որի կազմակերպիչներն էին ԱՄԷ-ի ներքին գործերի ու հանդուրժողականության նախարարությունները:

[07.03.18] ԵՊՀ-ՈՒՄ ԽՍՏԱՑՎՈՒՄ Է ԾԽԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտորատի հերթական նիստը, որի ընթացքում ամփոփվեցին նաև 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները:

[07.03.18] ՈՉ ԿԱՆԱՑԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԱՑԻ ՀՄԱՅՔ. ՀԱՍՄԻԿ ԹԵԼՈՒՆՑ

Դարեր շարունակ ընտանեկան դաստիարակության խնդիրը կնոջ ուսերին է եղել: Կինը եղել է տան ներսի պատը՝ ընտանիքում ունենալով ավելի մեծ հեղինակություն, քան տղամարդը: Հետագայում կնոջ դերն ու նշանակությունը էական փոփոխությունների ենթարկվեցին, վերանայվեցին և վերաիմաստավորվեցին նրա գործառնություններն ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակաքաղաքական կյանքում:

[07.03.18] ԽՈՀԱՆՈՑԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԿԱՆԱՑԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհում ավանդաբար առավել շատ տղամարդիկ, քան կանայք են զբաղվում գիտական գործունեությամբ, ինի դա արտա- թե ներհամալսարանական միջավայրում:

[07.03.18] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՄՏԱՆՈՒՄ ԵՆ ԳՈՐԾՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ

Այսօր ԵՊՀ քիմիայի և կենսաբանության ֆակուլտետների մի խումբ ուսանողներ և շրջանավարտներ այցելեցին «Էֆ-Դի-Էյ լաբորատորիա» ՍՊԸ:

[07.03.18] ԳԱՐՈՒՆ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ

Լուսանկարիչ, Նյու Յորքի բիենալեի մասնակից Տաթևիկ Մելքոնյանի լուսանկարների ցուցահանդեսը նվիրված է լուսանկարչուհու հոր՝ ԵՊՀ դասախոս, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լիպարիտ Մելքոնյանի հիշատակին:

[08.03.18] ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑ ԵՊՀ 96-ԱՄՅԱ ԴՈՑԵՆՏ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ

Հրաչյա Աճառյանի ուսուցիչ Հայնրիխ Հյուբշմանի դերը հայագիտական, մասնավորապես հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության հարցում հնարավոր չէ թերագնահատել:

[08.03.18] 55 ՏԱՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ. «ԵՊՀ-Ն ԱՐԺԱՆԻ Է ՀԱՎԱՏԱՐԻՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ»

ԵՊՀ կադրերի բաժնի վարիչ Աշխեն Հովսեփյանը 17 տարեկանից աշխատում է համալսարանում: Լավագույն տարիները Մայր բուհում անցկացրած տիկին Աշխենն այս տարի մեկնում է վաստակած հանգստի:

[12.03.18] ԱՐԱԲԱԳԵՏՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՊԵՐ ԵՆ ՀԱՍՏԱՏԵԼ ԱՄԷ-ՈՒՄ

ԵՊՀ արաբագետների խումբը Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի շրջանակում եղել է Շաբժա քաղաքում և այցելել տեղի համալսարան:

[12.03.18] «ԵՊՀ-Ն ԿԱՊԵՐ Է ՀԱՍՏԱՏՈՒՄ ԻՐԱՆԻ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ». ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Մարտի 4-9-ը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ներկայացուցիչներն այցելել են Իրանի խոշորագույն համալսարաններ, մասնակցել գիտական սեմինարների և հետագա համագործակցության ակնկալիքով իրանցի գործընկերների հետ պայմանավորվածություններ ձեռք բերել:

[12.03.18] «ՄԻԱՅՆ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՎ՝ ԿԱՐՈՂ ԵՔ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱՆՅԵԼ». ՍՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում դասընթացավար Մուշեղ Ավետիսյանի հետ:

[13.03.18] «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ՍՏԱՄԲՈՒԼ-ՆՅՈՒՐՆԲԵՐԳ-ՀԱԱԳԱ». ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն կարդաց Նյուրնբերգի Ֆրիդրիխ-Ալեքսանդր համալսարանի միջազգային իրավունքի ինստիտուտի հայագի գիտաշխատող Գուրգեն Պետրոսյանը:

[13.03.18] ԴԱՍԸՆԹԱՅԻ ՇՆՈՐՀԻՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈԼՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ մեկնարկում է նոր ծրագիր զբոսավարությամբ զբաղվողների համար:

[13.03.18] «ԱՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ ՄԱՀՄԱՆԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԶԻՆՎՈՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՐ ԿԱՊԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ Է». ՎԱՀԱԳՆ ՎԱՐԱԳՅԱՆ

Մարտի 10-12-ը ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը կազմակերպել էր այցելություն Արցախի Հանրապետություն՝ նվիրված Մարտակերտի շրջանի ազատագրման 25-ամյակին:

[14.03.18] ՀԱՅ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

ԵՊՀ-ի և Գերմանիայի Դյուսելդորգ Էսսեն համալսարանի միջև համագործակցության շրջանակում գերմանացի ուսանողները պրոֆեսոր Ռուդոլֆ Ժուլեկայի հետ այցելել են պետհամալսարան:

[14.03.18] ԼԱՎԱԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՀԱՅՏՆՎԵՆ «UCOM»-ՈՒՄ

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և «Ucom» հեռահաղորդակցական ընկերության համագործակցության շրջանակում պետհամալսարանում կազմակերպվել էր կլոր սեղան-հանդիպում ընկերության ներկայացուցիչների հետ:

[14.03.18] «ՖՐԱՆՍԵՐԵՆԸ ՍԻՐՈ ԼԵԶՈՒ Է». ՀԱՅՎ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ ֆրանկոֆոնների ակումբի և ՈՒԽ մշակույթի հանձնաժողովի նախաձեռնությամբ ԵՊՀ-ն այսօր հյուրընկալել էր երգիչ և դերասան Հայկ Պետրոսյանին:

[14.03.18] ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՍԹԻՎԵՆ ՀՈՔԻՆԳԸ. ԻՆՉՈ՞Վ ԷՐ ՆԱ ՀԱԿԱՐԿՈՒՄ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Մթիվեն Հոքինգը գիտական աշխարհի ամենահայտնիներից մեկն էր: Նրա մասին գրվել են գրքեր ու հոդվածներ, նկարահանվել են ֆիլմեր:

[15.03.18] ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2018»-Ի ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼ ԱՆՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
«ԵՊՀ օլիմպիադա-2018»-ում հաղթած աշակերտներին ԵՊՀ վճարովի համակարգ ընդունվելու դեպքում կտրամադրվեն ուսման վարձի գեղչեր:

[15.03.18] 40 ՆԵՐԳԱՂԹՅԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ. ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության գործառնությունների ղեկավար Շադիկ Մարուխյանի հետ ստորագրեց համագործակցության հուշագիր:

[15.03.18] «ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է». ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆ

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում այսօր հյուր էր Հանս Շմիդը՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնության նախկին դեսպանը:

[16.03.18] ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓՎԵՑ ՄԵՎ ԳՐՔՈՒՄ

Լույս է տեսել ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ղեկանի տեղակալ, Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Արամ Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում» գիրքը:

[16.03.18] **«ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՅՆ ՄԵՐ ԱԿՈՒՄԲՆ Է, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԱՆՑԿԱՑՆԵԼ ԲՈԼՈՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԼԵՈՒԱԳԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ».** ՍՈՒՐԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊՀ «Ապառաժ» լեռնագնացության ակումբն Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի
աջակցությամբ իրականացնում է ժայռամագլցման համահայկական բաց առաջնություն, որը տեղի կունենա
մարտի 21-ին: Հայաստանում առաջին անգամ կազմակերպվող առաջնությունն անցկացվելու է հենց
համալսարանում: Մրցույթի անցկացման նպատակի, կազմակերպչական հարցերի և ակումբի հեռանկարների
մասին զրուցել ենք ԵՊՀ «Ապառաժ» լեռնագնացության ակումբի մարզիչ Սուրեն Ստեփանյանի հետ:

[16.03.18] **ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՅՐ, ԽՆԱՄԱԿԱԼ, ԼԱՎ ՏԱՏԻԿ. ՏԱՐԵՑ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ-ՈՒՄ**

Այսօր ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում ներկայացվեց «Տարեց կանանց
սոցիալական կարգավիճակը Հայաստանում. ծերացման ֆեմինիզացիայի համատեքստում» հետազոտության
արդյունքները:

[16.03.18] **«ԵՐԱՆԻ՝ ՆՐԱՆ, ՈՎ ՄԱՍԻՍԸ ՏՈՒՆ ԿԲԵՐԻ».** ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ

Պետհամալսարանի իրավագիտության ֆակուլտետի Դուշման Վարդանի (Ստեփանյան) անունը կրող
լսարանում տեղի ունեցավ հանդիպում հերոսի մոր՝ տիկին Զարիկի հետ:

[17.03.18] **ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ ԿԿԱՅԱՆԱՆ
ԴԵԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՊՀ ֆակուլտետի ղեկանի ընտրության ընթացակարգի համաձայն և ռեկտորի 2018 թ.-ի մարտի 15-ի
հրամանով՝ Ժոռնալիստիկայի ու Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներում տեղի կունենան
ղեկանների ընտրություններ:

[17.03.18] **«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐ» ՆՈՐ ԱԿՈՒՄԲԸ ԿԳՈՐԾԻ ԵՊՀ-ՈՒՄ ԵՎ ԵՊՀ-ԻՑ ԴՈՒՐՄ**

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում փետրվարի 28-ից գործում է «Երիտասարդ
միջազգայնագետներ» ակումբը: Ուսանողական նոր ակումբի նպատակների, գործունեության և հետագա
անելիքների մասին զրուցել ենք հիմնադիր անդամ Անահիտ Ղազարյանի հետ:

[19.03.18] **ՖԻԶԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԵՐԱՋԱՆՔԸ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՔԱԹՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՆ Է**

Սամվել Պողոսյանը 2015 թ.-ին ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 2017 թ.-ից «Դասավանդի՛ր,
Հայաստան» ծրագրի շրջանակում դասավանդում է Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոցում:

[19.03.18] **ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ.
ՄԵՄԻՆԱՐ-ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ**

Մարտի 16-ին ԵՊՀ դասախոսների մասնակցությամբ Շիրակի պետական համալսարանում (ԵՊՀ) անցկացվել է
սեմինար-դասախոսություն:

[20.03.18] **«STEP»-Ի ՄԻՋՈՑՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ**

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ներկայացվեց «STEP» ուսանողների վերապատրաստման և
փոխանակման ծրագիրը:

[20.03.18] **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ ԿՀԻՄԱՐԴՎԻ ԵՊՀ-ՈՒՄ.
ՀՈՒՇԱԳԻՐ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԵՏ**

Մարտի 19-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան Գազիկ Ղազինյանը և Կարմիր խաչի միջազգային
կոմիտեի հայաստանյան պատվիրակության ղեկավար Կարոլին Դույզը կնքեցին փոխըմբռնման հուշագիր:

[20.03.18] **ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ ԵՊՀ «ԷԿՐԱՆԻՆ»**

ԵՊՀ մշակույթի կենտրոնը Հայաստանի ազգային կինոկենտրոնի հետ համագործակցության շրջանակում վերսկսում է արդեն ավանդույթ դարձած ֆիլմերի ցուցադրությունը:

[20.03.18] **«ԵՂԻՐ ԱՆՀԱՏ». ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ԷԼԴԱ ԳՐԻՆԸ ԿՂԱՌՆԱՐ 90 ՏԱՐԵԿԱՆ**

Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում Էլդա Գրինի 90-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթի շրջանակում տեղի ունեցավ նրա՝ հետմահու տպագրված «Աֆեկտ» մենագրության շնորհանդեսը:

[20.03.18] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՔՆՆԱՐԿՎԵՑ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում «ԵՊՀ ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնությունը կազմակերպել էր քննարկում, որին մասնակցում էին կրթության ոլորտի փորձագետներ, ուսանողներ, բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ:

[21.03.18] **ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՑԵԼԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ. ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՀԵՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարտի 20-ին ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ և դասախոսներ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ Նաիրա Գասպարյանի ղեկավարությամբ, այցելեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:

[21.03.18] **ՊՈՆՁԻԱՅԻՑ ԵՐԱՇԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՍ ՔԱՅԼ Է. ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ ՆՇԵՑԻՆ ՊՈՆՁԻԱՅԻ ՕՐԸ**

Այսօր ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի և Հայաստանի ազգային գրադարանի նախաձեռնությամբ նշվեց պոեզիայի միջազգային օրը:

[21.03.18] **ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ՆՈՈՒՐՈՒԶԸ՝ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պարսկերենի խմբի ուսանողները Հայ-իրանական բարեկամության նորաբաց լսարանում կազմակերպել էին միջոցառում՝ նվիրված Իրանի Իսլամական Հանրապետությունում նշվող Նոուրուզի տոնին:

[21.03.18] **ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԺԱՅՈՒՄՍԱԳԼՅՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹՈՂՆԵՐԸ**

Այսօր ԵՊՀ «Ապառաժ» լեռնագնացության և արտակարգ իրավիճակների ակումբն Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի աջակցությամբ իրականացրեց դահլիճային ժայռամագլցման բաց առաջնություն:

[22.03.18] **ԵՊՀ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՍՓՑՈՒՈՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՄԱՐՆԵՐԻՆ**

2018 թ.-ի հուլիսի 1-28-ը ԵՊՀ-ում կանցկացվի ՀՀ Սփյուռքի նախարարության և Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող «Սփյուռք ամառային դպրոց-2018» ծրագիրը: Ամառային դպրոցի ավանդույթների, ինչպես նաև այս տարվա համար նախատեսված ծրագրի առանձնահատկությունների մասին լրագրող Վարդուհի Զաքարյանը զրուցել է ծրագրի պատասխանատու, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի հետ:

[22.03.18] **ԵՊՀ-ՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՔԱՆԱԿԻ ԿՐԵԴԻՏՆԵՐ ՉՀԱՎԱՔԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԶԵՌԱՑՎԵՆ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտորատի հերթական նիստը, որի ընթացքում ամփոփվեցին 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի հեռակա ուսուցման առաջին լուծարքային շրջանի արդյունքները:

[22.03.18] ԵՊՀ-ՈՒՄ ԿԳՈՐԾԵՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ. ԿԱՅԱՑԱՎ ԳԻՏՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Այսօր պետհամալսարանում տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի նիստը, որը վարում էր ռեկտոր Արամ Սիմոնյանը:

[22.03.18] ՆՎԻՐՅԱԼԸ. ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին, ինչպես նաև առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում հայտնի լրագրող, Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոնի համակարգող Թաթուլ Հակոբյանի հետ:

[23.03.18] «ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԴԵՄՊԱՆՆԵՐՆ ԵՆ». ԵՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով գիտագործնական քննարկում:

[23.03.18] ԵՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մարտի 21-23-ն Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնությամբ կազմակերպվել է համաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության 100-ամյակին:

[23.03.18] ԴԵՐԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՎՏԱՆԳ ԼԻՆԵՆ. ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԸ ՀՐԱՎԻՐԵԼ ԷՐՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Այսօր Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնը հյուրընկալել էր «Դարմանքեստ Լաբորատորիա» հետազոտական կենտրոնի աշխատակիցներին:

[26.03.18] ՓՈՐՁԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԱՐԹԱԿ. ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻՆ

Մարտի 12-16-ը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Տիգրան Դադունցը և Գրիգոր Չոբանյանը մասնակցել են Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում կայացած միջազգային ներդրումային իրավունքի ոլորտում ամենահեղինակավոր դատախաղ-մրցույթին («11th Frankfurt Investment Arbitration Moot Court 2018»):

[26.03.18] «ԵՍ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ՉԵՄ ԾԽՈՒՄ». ԿԱՄՔԻ ՈՒԺԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵՑ ԵՊՀ ՀԱԿԱՀՐԵՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՎԱԶԱԳԱՆ ՄՐԱՊՅԱՆԸ

ԵՊՀ ռեկտորի՝ 2018 թ.-ի մարտի 7-ի հրամանով՝ բոլոր ստորաբաժանումները խստացրել են ծխելու դեմ պայքարը՝ կարգազանցներին (անկախ ուսանող, դասախոս կամ այլ աշխատակից լինելու հանգամանքից) ենթարկելով խիստ կարգապահական տույժերի՝ ընդհուպ բուհից հեռացում:

[26.03.18] ԷՖԹԱՆԱԶԻԱ. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Յուրաքանչյուր ոք գիտի, որ մահանալու է, բայց հոգու խորքում հույս ունի՝ զոնե իր դեպքում տեղի կունենա սպասված բացառությունը:

[27.03.18] ՄԱԿ-Ի ՍՈՂԵԼ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵՍՅԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ ՄՐՑԱՆԱԿԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Մարտի 9-11-ը ԱՄՆ Նյու Յորք քաղաքում անցկացվել է «Մեր ցանկալի ապագան» խորագիրը կրող ՄԱԿ-ի մոդել համաժողով, որին մասնակցել է համալսարանական Իգոր Միրզախանյանը:

[27.03.18] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին:

[27.03.18] ԱՅՍՕՐ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքի բակում և Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ ֆլեշմոբ:

[28.03.18] ԵՊՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ

Նոր դասընթացների հեղինակը գերմանաբնակ մեր հայրենակից Արթին (Քեհեյան) Աքուլոն է, ով ավելի քան 30 տարի աշխատել է Ֆրանկֆուրտ քաղաքի սոցիալական աշխատանքի ոլորտում: Հոգեբուժական խնամքի ասպարեզում նա հատկապես աշխատել է հոգեկան տարբեր խնդիրներ ունեցող՝ Գերմանիա ներգաղթած փախստականների հետ:

[28.03.18] ԵՊՀ ԹԻՄԸ ՄԻՋՔՈՒՀԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ ԴԱՏԱԽԱՂԻ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆԸ

Մարտի 24-25-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում Եվրոպայի խորհուրդը և «ԷյԴիԱր փարթենրս» ընկերությունը կազմակերպել էին արբիտրաժ խաղ-մրցույթը, որին մասնակցել են համալսարանական երկու թիմեր:

[28.03.18] «ԵՊՀ-Ն ԼՍՈՒՄ Է ՁԵԶ». ՀԵՌԱԽՈՍՍՑԻՆ ՑԱՆՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ՊԱՏՄՈՒՄ Է ՀԵՏԱՔՐՔԻՐ ԴԵՊՔԵՐ

Հետաքրքիր, տարաբնույթ և շատ հաճախ նաև զվարճալի հարցեր: Լրագրող Քնար Միսակյանը գրուցել է Հեռախոսային ցանցի տեղեկատվի աշխատակից Շուշան Ղազանչյանի հետ և պարզել, թե ինչ հարցերի է նա «ստիպված լինում» պատասխանել:

[29.03.18] ՄԱՅՐԻԿԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԻԿԻ ԾՆԴԱՎԱՅՐՈՒՄ. ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ Է ՎԱՂԱԶԻՆՈՒՄ

Վերոնիկա Շահնազարյանը 2016 թվականին ավարտել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը: 2017 թվականից նա «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակում Արցախի Հանրապետության Վաղազին գյուղի դպրոցում դասավանդում է անգլերեն և ռուսերեն:

[29.03.18] «ՆԱԽՔԱՆ ԳՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՍ ՄԱՐԴԿԱՆՑ ԶԱՅՆԵՐԸ ՆԿԱՐՈՒՄ Է՞Ր». ՆՈՐԱՅՐ ՇՈՂԻԿՑԱՆ

ԵՊՀ ՌԻՖ հասարակայնության հետ կապերի և լրատվության հարցերով հանձնաժողովի նախագահ Նորայր Շողիկյանը խոսում է լրագրության, ռուս անվանի հաղորդավար Վ. Պոզների և ուսանողների մասին:

[29.03.18] ԱՐՏԱԿ ՇԱԲՈՑԱՆԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՊԱՏՄԵՑ ԻՐ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԿԱՌՈՒՅՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում համալսարանականներին հյուրընկալվել էր ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը:

[29.03.18] ՀԱՄԱԼՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ ՊԱՏՄԵԼ ԵՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության և պատմության ֆակուլտետի նախաձեռնությամբ Արարատի պետական քոլեջում տեղի ունեցավ դասախոսություն-քննարկում Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի (եռատոների) 100-ամյակի միջոցառումների շրջանակում:

[30.03.18] ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ այսօր տեղի ունեցավ սեմինար-քննարկում:

[30.03.18] ՔԻՄԻԱՅԻ ԱՄԵՆԱԳՈՒՆԵՂ ՈՒ ՎԱՌ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ՄԵԿԻ՝ ՄԱՆԴԻ ՔԻՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒՄ Է ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Սննդի անվտանգությունը ներկայումս մարդկության առջև ծառացած ամենալուրջ խնդիրներից է, քանի որ տեխնիկական առաջընթացի և մարդկանց բազմաբնույթ գործունեության հետևանքով միջավայրի աղտոտվածությունը մի շարք հիվանդությունների պատճառ է դառնում:

[31.03.18] ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄՐՑԵԼ. ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼԸ

ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կողմից կազմակերպվող դպրոցականների ամենամյա օլիմպիադայի առաջին փուլի հաղթողներն իրենց ուժերը փորձեցին երկրորդ փուլում:

[31.03.18] «Ս. ԶԱՏԿԻՆ ՄԻՇՏ ԲԱԽՏ ԵՆ ԲԱԺԱՆՈՒՄ, ԵՎ ՈՎ ՑԵՐԵՎԸ ՔՆԻ, ԿԶՐԿՎԻ ԻՐ ԲԱԺԻՆ ԲԱԽՏԻՑ».
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՅԱՆԻ ՀԵՏ

Այս տարի Հայ առաքելական եկեղեցին Ս. Զատիկը՝ Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը, կնշի ապրիլի 1-ին: Ի թիվս այլ Տաղավար տոների՝ (Պայծառակերպության տոն կամ Վարդավառ, Սբ. Աստվածածնի ննջման և վերափոխման տոն, Խաչվերաց) Ս. Զատիկը նույնպես շարժական տոն է և միշտ նշվում է զարնանային գիշերահավասարից հետո՝ լուսնի լրմանը հաջորդող առաջին կիրակի օրը: Ըստ այդմ՝ այն տեղաշարժվում է մարտի 22-ից ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում:

[03.04.18] ԵՊՀ ՀՈԳԵԲԱՆ. «ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ԱՌԻՏԻԶՄԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԻՐԱԶԵԿՎԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ»

2008 թ.-ից ապրիլի 2-ը նշվում է որպես Առևտրի օրը:

[03.04.18] «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԼԻՆԵՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում գիտության առաջընթացին և կադրային ներուժով համալրմանն ուղղված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (ԵԳԱԾ) ամփոփել է իր 2017 թ.-ի գործունեությունը:

[04.04.18] ԲՈՒՆԴԵՍՔԱԳԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑԱԾ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՑ ՄԵԿԸ ԵՊՀ-ԻՑ Է

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մագիստրանտ, ՈԻԳԸ նախկին փոխնախագահ Մարիամ Մարտիրոսյանը IPS (Internationales Parlaments-Stipendium) ծրագրի շրջանակում Բեռլինում է, որտեղ 5 ամիսների ընթացքում զուգահեռաբար կստանա և՛ կրթություն, և՛ պրակտիկա:

[04.04.18] «ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ, ԵՐԲ ՏԱՐԲԵՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՄ ԻՄ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ».
ՄԱՐԻԱ ՄԵՆԴԵՍ ՄԱՆՏՈՍ

Ապրիլի 4-6-ը Իսպանիայի Ալիկանտեի համալսարանի դոկտոր Մարիա Մենդես Մանտոսը դասախոսություններ կկարդա ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դասախոսների համար:

[04.04.18] «ՀԱՄԿԱՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՀԱՐՄԱՐՎՈՂԸ ԵՄ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՄ, ՈՉ ԹԵ ՄԱՐԴԻԿ ՀԱՐՄԱՐՎԵՆ ԻՆՁ».
ԵՊՀ ՄԻՐԻԱԶԱՅ ՈՒՍԱՆՈՂ ԷԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Էլինա Հարությունյանը ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի դեղագիտության բաժնի 1-ին կուրսում է սովորում: Նա այն սիրիահայ երիտասարդներից մեկն է, ով կրթություն է ստանում ԵՊՀ-ում և իր ապագան տեսնում Հայաստանում:

[04.04.18] ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀՍԱԿԵՑՐԻՆ ԻՐԵՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այսօր Մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են Կոտայքի մարզի Եղվարդի համար 1 ավագ դպրոց:

[05.04.18] Ի ՊԱՏԱՄԱՆ «ԺՈՂՈՎՈՒՐ» ՕՐԱԹԵՐԹԻ՝ 03.04.2018 Թ.-Ի «ՔՈՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ ՈՒՌՍԱԿԱՆ «ՌՈՍԳՈՍՏՐԱՆԻՆ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ

03.04.2018 թ.-ի «Ժողովուրդ» օրաթերթի՝ «Քոչարյանների ընկերությունը հաղթեց ռուսական «Ռոսգոստրանին» հրապարակման մեջ տեղ են գտել անճշտություններ և փաստական հանգամանքների խեղաթյուրումներ, որոնք էական վնաս են պատճառել Երևանի պետական համալսարանի հեղինակությանը և համբավին: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը և հասարակական հնչեղությունը, ինչպես նաև այն, որ ԵՊՀ-ն օրենքի տեսանկյունից դիտվում է որպես հանրային նշանակության կազմակերպություն՝ իր բոլոր հետևանքներով, հարկ ենք համարում բաց տեքստով և հղումներով, ինչպես նաև պահպանելով իրադարձությունների հաջորդականությունը, հասարակությանը ներկայացնել այն, ինչ տեղի է ունեցել:

[05.04.18] «ՆԿԱՏԵԼ ԵՄ, ՈՐ ՏԱՐԻՔՍ ԻՆՁ ԳՐՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՎԵԼԻ ՔՄԱՀԱՃ Է ԴԱՐՁՐԵԼ». ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒՅԻ ԼԱՐԻՍԱ ԱՎԱԳՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ Լարիսա Ավագյանն արդեն 22 տարի աշխատում է ԵՊՀ ընթերցասրահում: Այս տարիների ընթացքում հասցրել է կուտակել աշխատանքային փորձ և ընթերցված գրքերի հարուստ պատմություն:

[05.04.18] ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԻՆ ՀԱՁՈՂԱԿ ՏՈՒՐՄԵՆԵԶԵՐ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՔԱՅԼԵՐԸ

Այսօր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպել էր «Ինչպես դառնալ հաջողակ տուրմենեջեր. TOP 5 քայլեր» խորագրով սեմինար-դասընթաց:

[05.04.18] ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԿԻՐԱԿԱՆԱՅՎԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հայաստանում գործող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (ԵԳԱԾ) նպատակ ունի նպաստել գիտության առաջընթացին, կադրային ներուժի համալրմանը, ինչպես նաև երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը:

[06.04.18] ԴԱՍԱՌՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ ՈՐԱԿՑԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին խոսելիս առաջինը մարդու մտքով դասախոսություններն են անցնում: Վերջիններս ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետ միջոցներից են, որոնք մեզ են հասել միջնադարից և շարունակում են մինչ օրս արդիական մնալ:

[06.04.18] «ՍՏԱՄԲՈՒԼԸ ԿՈՆՏՐԱՍՏԻ ՔԱՂԱՔ Է, ՈՐՏԵՂ ՄԻԱՌԱՌՆՎԱԾ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՈՒ ԱՄԻԱՅԻ ՇՈՒՆՉԸ». ԵՊՀ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍՏԱՄԲՈՒԼ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի ուսանողները մարտի 22-26-ը գիտաճանաչողական այցով մեկնել էին Ստամբուլ:

[06.04.18] ԵՊՀ ԱՄԻՍԵՆՏ. «ՀԱՁՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ»

Այսօր ԵՊՀ դասախոսները Մայր բուհի կրթական ծրագրերն ու ֆակուլտետները ներկայացնելու համար այցելել են Գորիսի համար 4 ավագ դպրոց:

[06.04.18] «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ ԿԶԵՎԱՎՈՐԵՆՔ ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ, ՈՐՈՒՔ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԾԱՎԱԼՈՒՄ». ՇԱՀԵՆ ԱՎԱԳՅԱՆ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների հյուրն էր ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանը:

[06.04.18] ՀԱԳՈՒՍՏԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈՋՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ. ԵՊՀ-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԳԵՆԴԵՐԱՑԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը կազմակերպել էր ազգագրագետ, մշակութային մարդաբան Լիլիթ Մանուկյանի կողմից իրականացրած «Հագուստը՝ որպես կնոջ կերպարի կառուցման և ապակառուցման միջոց խորհրդային ու շրջանում» թեմայով հետազոտության արդյունքների ներկայացումը:

[07.04.18] «ՄԿՋՔԻՑ ՊԵՏՔ Է ԻՆՔԴ ՔԵՋ ՎՐԱ ԱՇԽԱՏԵՍ, ՀԵՏՈ՝ ԵՐԿՐԻ». ՄԻՐԻԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների առաջին կուրսի ուսանող Դանիել Գևորգյանը պատմում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, դիվանագիտության և Ֆրեզնոյի ՀՀ հյուպատոսի մասին:

[07.04.18] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍ. «ՀԱՅՐԵՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆ ՕՐԻՆԱԿՆ Է. ՄԵՋ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ, ՈՉ ԹԵ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«Հայրենասիրությունը ո՛չ պետք է մասնագիտություն լինի, ո՛չ էլ փաստաթղթի վերնագիր: Հայրենասիրությունը բարձր գաղափար է, որը չի կարելի տրոհել մասերի: Հայրենասիրության մասին իրավական փաստաթուղթ ունենալն անհրաժեշտ չէ», - այսօր մեզ հետ զրույցում անդրադառնալով «Մովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության» նախագծին՝ կարծիք հայտնեց ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դասախոս Սերոբ Խաչատրյանը:

[07.04.18] «ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՆՈՋ ՁԳՏՈՒՄԸ ՉԻ ԽՐԱԽՈՒՄՎՈՒՄ». ԵՊՀ ԳԵՆԴԵՐԱՑԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ

«Այսօր հիմնականում կինն ընկալվում է որպես ավելի թույլ էակ, որի ձգտումներն ավելի սահմանափակ են. այն դիտվում է ոչ միայն ընտանիքում, այլև ընտանիքից դուրս», - այսօր մեզ հետ զրույցում խոսելով գենդերային հավասարությանն ուղղված քաղաքականության մասին՝ այսպիսի տեսակետ հայտնեց ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի տնօրեն, Սոցիոլոգիայի ֆակուլտետի դոցենտ Գոհար Շահնազարյանը:

[07.04.18] ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կողմից իրականացվող ամենամյա օլիմպիադային այս տարի մասնակցել են 2.186 աշակերտներ: Այսօր ամփոփվել են երկրորդ փուլի արդյունքները:

[07.04.18] «ԵԹԵ ԽՆԴԻՐՆԵՐ ՉԼԻՆԵՆ, ԱՌԱՋ ԳՆԱԼՈՒ ԵՎ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ ՉԻ ԼԻՆԻ». ԽԱՉԻԿ ԱՐԱՋՅԱՆ

Խաչիկ Աբաջյանը սովորում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 3-րդ կուրսում: Միշտ նոր գաղափարներ ունեցող Խաչիկն անպայման ուզում է, որ իր դիմացինը հենց սկզբից իմանա՝ երբեք լուռ չի մնում, բոլորի հետ լեզու է գտնում և սիրում է նոր ծանոթություններ:

[07.04.18] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐՆ ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՔՆԵՐԸ. ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՖՈՏՈՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը համալսարանի Մինչհամալսարանական կրթության վարչության հետ ապրիլի 6-ին կազմակերպել էին հերթական մարզային այցելությունը: Այս անգամ ԵՊՀ դասախոսական անձնակազմն աշակերտների հետ հանդիպումն անցկացրել է Գյումրի քաղաքի «Ֆոտոն» վարժարանում:

[07.04.18] ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է ԴԱՌՆԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 5-ին Հռոմի սրբազան քահանայապետի օրհնությամբ Վատիկանում բացվեց Գրիգոր Նարեկացու արձանը, որը կանգնեցվել էր այս տարվա մարտի 21-ին: Արձանի օծման արարողությանը մասնակցել են ՀՀ նախագահը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Հարցազրույց իրանագետ Վարդան Ոսկանյանի հետ:

[09.04.18] ՏՊԱԳԻՐ ԹՈՒՂԹ, ԹԵ՞ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԷԿՐԱՆ. ԻՆՉ ԵՆ ՊԱՏՍՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամերիկյան «Business insider» կայքն անդրադարձել է թո՞ւղթ, թե՞ համակարգչային էկրան «հակամարտությանը»:

[09.04.18] «ՑԱՎԱԼԻ Է, ՈՐ ՄԵՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԱՏՈՐԵՆ ՔԱՐՈՉՈՒՄ ԵՆ ԿՆՈՋ ՀԱՆՂԵՊ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ». ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍ

Հայաստանում տղամարդկանց կողմից կանանց հանդեպ ցուցաբերվող անհավասարության երևույթը դեռևս շարունակում է արդիական մնալ: Վերջին տարիներին իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնք նվիրված են կանանց իրավունքների, հասարակությունում կանանց դերի, գենդերային հավասարության, ընտանեկան բռնությունների խնդիրներին: Մեզ հետ զրույցում վերոնշյալ խնդիրներին անդրադարձավ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դասախոս, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ադասի Թադևոսյանը:

[09.04.18] «ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆ ՄԻՍՅԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ». ԻՐԱՔՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի 1-ին կուրսի իրաքցի ուսանողներ Սթար Զալալ Մուհամեդն ու Մարբաստ Աբդուլաբիստը պատմում են նավթի, ուսանողական կյանքի և Հայաստանի մասին:

[09.04.18] ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի մագիստրանտ Տիգրան Մկրտչյանն ակտիվ ուսանող է, խոստումնալից երիտասարդ գիտնական, ով համագործակցում է «ՅԵՌՆ» միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպության հետ:

[09.04.18] «ԵԹԵ ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐ ՉԵՔ, ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԵՔ ԱՆԵԼՈՒ». ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Այսօր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ ֆակուլտետի մի խումբ ուսանողներ այցելեցին Հայաստանի հանրային ռադիո և լսեցին Մարկ Գրիգորյանի դասախոսությունը:

[10.04.18] ԻՆՉ ԿԱՐԴԱԼ ՈՒ ԻՆՉ ԴԻՏԵԼ. ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՏԱԼԻՄ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Գրեթե բոլորի և հատկապես երիտասարդների կյանքի անբաժան մասն են կազմում գրքերը և ֆիլմերը: Ձեզ ենք ներկայացնում ԵՊՀ ուսանողների խորհուրդները, թե այս ամիս ինչ գիրք կարդալ և ինչ ֆիլմ դիտել:

[10.04.18] «ԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ». ՀԱՆԴԴՊՈՒՄ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՐ 13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

«ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը տարածաշրջանում ունի լավագույն հնարավորությունները բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար: Ֆարմացիայի բոլոր ուղղություններով գործնական աշխատանքներ կատարելու համար ստեղծված են ժամանակակից պայմաններ: Լսարանում ստացած գիտելիքն ուսանողն ամրապնդում է ժամանակակից լաբորատորիաներում», - Հրազդանի համար 13 ավագ դպրոցում աշակերտների հետ հանդիպման ժամանակ ասաց ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Աշոտ Սաղյանը:

[10.04.18] ԵՊՀ-Ն ԾՐԱԳՐՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՆԵԼ ԻՏԱԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄԸ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Իտալիայից ժամանած պատվիրակությանը:

[10.04.18] ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՅՏՆԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր Ռայնբախի առաջին աստանի դատարանի նախագահ Սիլվիա Վուրմը և Վալդբրյոլի առաջին աստանի դատարանի նախագահ Ֆրաիդա Քրափոթն իրավագետներին ներկայացրին «Անչափահասների քրեական պատասխանատվության հիմնախնդիրները» թեմայով դասախոսություն:

[10.04.18] **«ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԼԻԴԵՐՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ».** ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՍ ՄԻՍՈՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՌԻՖ նախագահության, ՌԲԳԸ ղեկավար կազմի, ինչպես նաև ուսանողական այլ հանձնաժողովների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների հիմնական նպատակն է համալսարանի ղեկավարի հետ քննարկել ուսանողությանն անհանգստացնող խնդիրները, ներկայացնել առաջարկներ ու տալ համապատասխան լուծումներ:

[11.04.18] **ԱՊԱԳԱ ԴԻՄՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ**

Այսօր ԵՊՀ իրավագիտության, սոցիոլոգիայի, ժուռնալիստիկայի, ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են Վաղարշապատի համար 4 ավագ դպրոց Մայր բուհի կրթական ծրագրերը և ֆակուլտետները ներկայացնելու համար:

[11.04.18] **«ԲԱԶՄԱՀԱԶԱՐԱՆՈՑ ԼՍԱՐԱՆԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ԴԺՎԱՐ Է ՎԱՍՏԱԿԵԼ, ԲԱՅՑ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԿ ՄԽԱԼՆ ԷԼ ԲԱՎԱՐԱՐ Է».** ԴԵՆԻՍ ՊՈԼՈՒՆՉՈՒԿՈՎ

Ռուսաստանյան մեդիա դաշտի մի շարք հեղինակավոր լրագրողներ, ինչպես նաև տարբեր համալսարաններում ժուռնալիստիկա դասավանդողներ հանդիպեցին ԵՊՀ ուսանողների հետ:

[11.04.18] **ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՆՈՐԱԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԱՎ ՕՐԻՆԱԿ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ֆիզիոլոգիայի ամբիոնը «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հետ կազմակերպել էին բարեգործական ակցիա՝ դոնորագրում:

[11.04.18] **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հաշվի առնելով ԵՊՀ մոտ երկու տասնյակ ուսանողների՝ վերջին օրերի քաղաքական և քաղաքացիական ակտիվության աճը՝ հայտարարում ենք...

[11.04.18] **«ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ՆԱԽԵՎԱՌԱԶ ԾՆՎՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ».** ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Կոնֆլիկտի ընկալման հիմնախնդիրները» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ Խաչիկ Գալստյանը:

[11.04.18] **ԵՊՀ ՖՐԱՆԿՈՖՈՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ Է ԳՈՐԾԵԼՈՒ**

Այսօր ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ միջոցառում, որը նվիրված էր ԵՊՀ ֆրանկոֆոնների ակումբի պաշտոնական բացմանը:

[11.04.18] **«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՆԴԴԵՄ ԱԿԱՆՆԵՐԻ».** ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԻՐԱԶԵԿՎԵՑԻՆ ԱԿԱՆԱՑԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ապրիլի 11-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում «Հումանիտար ականագերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ համալսարանականների հետ անցկացվեց «Հայաստանն ընդդեմ ականների» խորագրով սեմինար-հանդիպում:

[11.04.18] **«ՔԱՆԻ ԴԵՆ ԶՈՒՆԵՆՔ ԱՆԱԶԱՌ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԶԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՆՑՑԱԼԻ ՄԽԱԼՆԵՐԻՑ ԴԱՄԵՐ ՔԱՂԵԼ».** ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետն այսօր հյուրընկալել էր Կոտայքի մարզի Արովյան քաղաքի համար 4 ավագ դպրոցի աշակերտներին:

[12.04.18] **«ԵՍ ՄՏԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ, ՈՐ ՆԱԽԱԳԾԻ ՈՐՈՇ ԿԵՏԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԼՈԿԱԼԱՑՄԱՆ ՏԱՆԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ ՈՒՆԵՆ».** ԵՊՀ ԴՈՑԵՆՏՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

«Այս նախագիծը ողջունելի է և խիստ արդիական, նույնիսկ փոքր-ինչ ուշացած: Սակայն նախագծում կան կետեր, որոնք շտկման և որոշակի փոփոխության են ենթակա», - այսօր մեզ հետ զրույցում անդրադառնալով «Մովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության» նախագծին՝ այսպիսի տեսակետ հայտնեց ԵՊՀ մանկավարժության և զարգացման կենտրոնի դոցենտ Արմինե Աշիկյանը:

[12.04.18] **ԵՊՀ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԵԿ ՏԱՐՈՎ ԵՐԿԱՐԱԶԳՎԵԼ Է**
ԵՊՀ-ում առաջիկա մեկ տարվա ընթացքում ևս գործատուի և աշխատողների հարաբերությունները կարգավորվելու են 2015 թվականին կնքված Կոլեկտիվ պայմանագրով:

[12.04.18] **ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՍԵՄԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**
2015 թ.-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքով Հայաստանը կիսանախագահական կառավարման համակարգից ապրիլի 9-ին անցում կատարեց խորհրդարանականի:

[12.04.18] **ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐԸ ԳԻՏԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՆ Է**
Պատմության ֆակուլտետի ասպիրանտ Մելիք Մկրտչյանը «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակում դասավանդում է Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցում:

[12.04.18] **«ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՓԱՍՏԱՐԿՎԱԾ ՊՆԴՈՒՄԸ ԿԲԵՌՆԱԹԱՓԻ ԻՄԿԱԿԱՆ ՄԵՂԱՎՈՐԻ ՄԵՂՔԸ».** ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

Այն, որ Հայոց ցեղասպանության իրականացման գործում Գերմանիան նույնպես իր մեղքի բաժինն ունի, փաստ է, որը 2016 թվականի հունիսի 2-ից արդեն պաշտոնապես ընդունում են նաև հենց իրենք՝ գերմանացիները:

[12.04.18] **ԻՆՉՊԵՍ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԱՆՁԸ ԿԱՐՈՂ Է ԲՐԵՆԴ ԴԱՌՆԱԼ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ**
ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը և «Smartology Digital Marketing Academy» ընկերությունը ուսանողների համար համատեղ կազմակերպել էին «Ես» բրենդինգ խորագրով սեմինար-դասընթաց, որը վարում էր ընկերության համահիմնադիր Արտակ Հարությունյանը:

[12.04.18] **ՀԱՇՎԵԼՈՒ ԱՐՎԵՍ. ՀԱՇՎԵԼ ՄՏՔՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՎՍՏԱՀԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ**

Հաշվելն այն արվեստն է, որին առօրյա կյանքում շատերը չեն տիրապետում: Մինչդեռ ամեն քայլափոխի մենք հաշվում ենք, վճարում, իսկ հաշվել չկարողացողը կարող է ձախողել ոչ միայն խնդրի լուծումը, այլև սեփական կյանքը:

[12.04.18] **ԵՊՀ-Ի ԵՎ «ՎՈՐԼԴ ՎԻՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՔ ԿԲԵՐԵՆ**

Այսօր ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագրի պաշտոնական բացումը:

[13.04.18] **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՎԱԾ ԵՊՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԿԲԱՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնում բացվեց Մոլեկուլային բջջագենետիկայի հայ-գերմանական լաբորատորիա՝ վերազինված լաբորատոր նոր սարքավորումներով և տեխնիկայով:

[13.04.18] ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԱՅԼՈՒՆ ՕՐԴԵՆԱԿ ԵՊՀ-ՈՒՄ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՎ ՈՒ ԱՍՄՈՒՆՔՈՎ

Այսօր ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ մշակութային միջոցառում Մայր բուհում անցկացվող Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում, որի ընթացքում հանրապետության մի քանի դպրոցների աշակերտներ հանդես եկան ֆրանսիական երգերով և ասմունքեցին ֆրանսիացի ժամանակակից գրողների բանաստեղծությունները:

[13.04.18] ՀԱՄԵՍՍ ՄԱՐԴԸ, ԱԶՆԻՎ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԵԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ. ՀԵՏՄԱՀՈՒ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԷԴՎԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ԵՊՀ պատմության ֆակուլտետում Էդվարդ Դանիելյանի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթի շրջանակում տեղի ունեցավ նրա՝ հետմահու տպագրված «Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը)» մենագրության շնորհանդեսը:

[13.04.18] ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մի քանի օր շարունակ ԵՊՀ-ում սաղրանքներ իրականացնելու փորձ է արվում, սակայն, բարեբախտաբար, հնարավոր եղավ խուսափել անկառավարելի վիճակից, ինչպես նաև չխաթարվեց բնականոն դասապրոցները: Բայց այսօր՝ ժամը 15:30-ի սահմաններում, մոտ 120-130 հոգի՝ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, ներխուժեցին ԵՊՀ-ի տարածք՝ թմբուկներով և գոռոցներով պարալիզացնելով բուհի բնականոն գործունեությունը:

[16.04.18] ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԵՊՀ ՈՒԳԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ 5-ՐԴ ԳԻՏԱՇՐՋԱՆԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՈՒԳԸ 5-րդ միջազգային գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը:

[16.04.18] ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ՖՐԱՆԿՈՖՈՆ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԵՑ ԵՊՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Այսօր Մայր բուհի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ ԵՊՀ ակադեմիական նվաճումների կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը:

[17.04.18] ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵԼ Է

Այսօր Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի նիստում միաձայն ֆակուլտետի դեկան է վերընտրվել Նադաշ Մարտիրոսյանը:

[18.04.18] «ՁՈՂԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ». ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԱԳԻՍՏՐԱՆՑ ՆԵԼԻ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԵՏ

Հայոց ցեղասպանության առջև օրեցօր ծառացող մարտահրավերներն առավել պահանջված են դարձնում հարցին տիրապետող, բանիմաց երիտասարդ մասնագետներին:

[18.04.18] ՄԱՀՄԱՆԱՄԵՐԸ ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ԵՊՀ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գաղտնիք չէ, որ սահմանամերձ գյուղերում ապրող մարդիկ հայրենիքի պաշտպանության գործում կատարում են նույն դերը, ինչ սահմանին կանգնած զինվորը: Այնտեղ ապրող մարդն իր գոյությամբ ու կենսակերպով սահմանը դարձնում է կենսունակ ու շնչող:

[18.04.18] «ԵՍ ԵՐՋԱՆԻԿ ԵՄ. ԸՆՏՐԵԼ ԵՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ ՄԻ ՃՅՈՒՂ, ՈՐԸ ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԷԼ ԱՎԵԼԻ ԶԱՐԳԱՑՆԵԼ». ԵՊՀ ԿՐՏՄԵՐ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ

Հայաստանում գործող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» (ԵԳԱՄ) շրջանակում ԵՊՀ կրտսեր գիտաշխատող, ԵԳԱՄ դեկավար կազմի նորանշանակ անդամ Հայկ Զաքարյանը վերապատրաստվել է Սկոլովոյի գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի լաբորատորիայում:

[18.04.18] ԵՊՀ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԵԼ ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Այսօր ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտխորհրդի նիստում 34 կողմ ձայնով ֆակուլտետի ղեկան է վերընտրվել ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Սահակյանը:

[20.04.18] ԱՄՓՈՓՎԵՑ ՈՒԳԸ 5-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ ՈՒԳԸ 5-րդ միջազգային գիտաժողովի փակման հանդիսավոր արարողությունը:

[20.04.18] ԵՊՀ ԴԱՄԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԴԱՍԸՆԹԱՑ

Այսօր ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում դասախոսների համար կազմակերպել էր դասընթաց, որի նպատակն է նպաստել համալսարանի միջազգայնացման քաղաքականությանը: Նշենք, որ դասընթացների ավարտից հետո մասնակիցներին կտրվի մեկ կրեդիտ:

[23.04.18] ԵՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Միյուոքի ազդեցությունը ժողովրդավարության կառուցման գործընթացում. վարքագծային բազմազանություն» թեմայով միջազգային համաժողովը:

[26.04.18] ԵՊՀ-Ի ԵՎ ԼՅՈՒԲԼՅԱՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ ՀՈՒՇԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Գազիկ Ղազիյանն ու Սյովենիայի Լյուբլյանայի համալսարանի պրոֆեսոր Դամյան Կորոսեչը նոր փոխգործակցություն ծավալելու փաստաթուղթ ստորագրեցին:

[27.04.18] ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՆՊԱՍԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որոշումը նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին է:

[27.04.18] ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՄԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում կայացավ ֆակուլտետի գիտխորհրդի արտահերթ նիստ, որի օրակարգում մեկ հարց էր՝ ղեկանի ընտրություն:

[27.04.18] «ՀՈՒՍՈՎ ԵՄ, ՈՐ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԸ ԿԳՈՐԾԵՆ Ի ՇԱՀ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԻՄԿ ԵՐԿԻՐԸ ԽԱՂԱՂ ԿՀԱՂԹԱՀԱՐԻ ԱՅՍ ՀՈՒՋՈՒՄՆԱԼԻՑ ԺԱՄԱՆԱԿԸ». ԱԼԲԵՐՏ ՎԱՅԼԵՐ

Մեզ տրված հարցազրույցում Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր և գերմանահայկական ֆորումի նախագահ Ալբերտ Վայլերը խոսում է Հայոց ցեղասպանության, գերմանահայկական ֆորումի և Հայաստանի ներկա իրավիճակի մասին:

[27.04.18] ԵՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ Է ՎԵՐԸՆՏՐՎԵԼ ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստում 23 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ ֆակուլտետի ղեկան է վերընտրվել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը:

[02.05.18] **ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՈԼՈՐՏՆԵՐ ԿԸՆԴԳԻՐ**

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասեյակում հյուրընկալեց Մարտին Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգ համալսարանի պատվիրակությանը, որը գլխավորում էր գերմանական համալսարանի ռեկտոր Ուդո Սթրաթերը:

[03.05.18] **«ԵՍ ԼԱՎԱՏԵՍ ԵՄ, ՔԱՆԻ ՈՐ ՏԵՄՆՈՒՄ ԵՄ՝ ԵԿՈՂ ՄԵՐՈՒՆԴ ԿԱՐՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ՈՐ ԿԻՆ ԱԾԱՆՑՅԱԼ ԶԷ»**. ԵՊՀ ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՊՀ շրջանավարտ Սոնա Գրիգորյանի նախաձեռնությամբ Մայր բուհի գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում ստեղծվել է Ֆիլմերի ակումբ: ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի «Կանայք, առաջնորդություն, զարգացում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտ Սոնան մեզ հետ զրույցում պատմում է ակումբի նպատակների, հրաձգության հանրապետական մրցույթում առաջին տեղը գրավելու, ինչպես նաև իր իսկ կողմից համակարգվող «ԱՐՔԱՆԵ» աղջիկների առաջնորդության և զարգացման ամառային դպրոցի մասին:

[03.05.18] **ՇԱՐԺՄԱՆ ՕՐԵՐԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ ՀԱՇՎԻ ԶԵՆ ԱՌՆՎԻ**

Ի պատասխան ԵՊՀ ՈՒՄ-ի բարձրաձայնած խնդրի՝ ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ՝ ապրիլի 13-ից մայիսի 2-ն ընկած ժամանակահատվածում երկրում ստեղծված իրավիճակից ելնելով՝ ուսումնական պարապմունքներից բացակայությունները ԵՊՀ-ում հաշվի չեն առնվի:

[03.05.18] **ԴԵԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՊՀ ԳԻՏՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտխորհրդի հերթական նիստը, որի օրակարգում ընդգրկված էին 7 և ընթացիկ մի քանի հարցեր:

[04.05.18] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԱՐՎԵՍԻ ՆՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Այսօր ԵՊՀ Հովհ. Ադամյան սրահում տեղի ունեցավ «Ո՞ւմ են փնտրում գործատուները. գործատուի հետ բանակցելու արվեստը և հաջողակ կարիերայի գրավականը» թեմայով դասընթացը:

[04.05.18] **ՀԱՅ-ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ**

Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ Նորվեգիայի Բերգենի համալսարանի պրոֆեսոր, ԵՊՀ հրավիրյալ դասախոս Նիլս-Կորե Բիրկելանդի պարզևատրման արարողությունը:

[04.05.18] **ԵՊՀ-Ն ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԸՆԴԼԱՑՆԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆ ԽՈՍԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ**

Կալիֆոռնիայի նահանգի Սան Խոսեի պետական համալսարանի պատվիրակությունն այսօր ԵՊՀ ուսումնագիտական գործընթացներին ծանոթանալու համար այցելել էր Մայր բուհ:

[05.05.18] **«ՈՒՍԱՆՈՂՆ ԻՐԵՆ ԼԻԱՐԺԵՔ ԿԶԳԱ ԻՐ ԵՐԿՐԻ ՏԵՐԸ». ԱԲՐԱՀԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Վերջին օրերին կատարված իրադարձություններին հնարավոր չէ անդրադառնալ առանց նստարանին նստած ուսանողի ու ամբիոնում կանգնած դասախոսի տեսանկյունները ներկայացնելու:

[05.05.18] **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՐԴԱՑԵԼ ԱՄՆ ՖԼԵՏՉԵՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանն ամերիկյան Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում հանդես է եկել «Կրոնական ազատության վերաբերյալ միջազգային չափանիշները և ՀՀ փորձը» թեմայով դասախոսությամբ:

[05.05.18] **ԵՊՀ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Այսօր Նորվեգիայի Բերգենի համալսարանի պրոֆեսոր Նիլս-Կորե Բիրկելանդը համագործակցության շրջանակում կենսաբաններին ներկայացրեց «Թթվային երկրաջերմային աղբյուրներում հարմարված Verrucomicrobia էքստրեմոֆիլ մանրէների մեթանոքսիդացումը» թեմայով դասախոսությունը:

[07.05.18] ՎԱՆԱՏՈՒՐ ՇԵՐԵՆՑ. «ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՈՒԳԸ-Ն ՊԵՏՔ Է ԴԱՐՉՆԵԼ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅՈՂ ԿԱՌՈՒՅՑ»

ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը նոր նախագահ ունի: Այսուհետ կառույցի աշխատանքները համակարգելու է Արևելագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Վանատուր Շերենցը: ՈՒԳԸ նոր նախագահի հետ զրուցել ենք նրա ծրագրային քայլերի, առաջիկա անելիքների ու սպասվելիք միջոցառումների մասին:

[07.05.18] ԱՅՍՈՒՀԵՏ ԵՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԼԱՆԱՅԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵԼՈՒ ԵՆ

ԵՊՀ աշխատողների բժշկական ապահովագրությունը շարունակելու համար հայտարարված մրցույթի արդյունքներով կրկին հաղթող է ճանաչվել «Ռոսգոստրախ Արմենիա» ապահովագրական ընկերությունը, որի հետ էլ նոր պայմանագիր է կնքվել:

[07.05.18] «ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԸ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆԵՐԿԱ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճի նախաարահում Իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Վարդան Այվազյանի մամուլի ասուլիսը Հայաստանում սահմանադրական խնդիրների, հնարավոր ճգնաժամի ու դրանից խուսափելու ուղիների մասին էր:

[07.05.18] «ԵՎՐՈՊԱՆ ԱՌԱՅԺՄ ԶԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՇԱՏ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ ՍՏԵՂԾԵԼ». ՌԱՌԻԼ ԻՄԵԹՍ

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում այսօր տեղի ունեցավ «Եվրոպական տնտեսական քաղաքականություն» թեմայով դասախոսություն: Դասախոսությունը կարդաց Էստոնիայի Տարտուի համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետի դեկան Ռաուլ Իմեթսը:

[08.05.18] ԵՊՀ-Ն ՈՒ ՖՐԱՆՇ-ԿՈՄՏԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՅԵՆ ՃՇԳՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում համագործակցության հուշագիր ստորագրվեց Մայր բուհի և Բուրգունդիա Ֆրանշ-Կոմտե համալսարանի միջև:

[09.05.18] «ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ԶԳՈՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ՝ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԻՐ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ». ԱՐԱՍ ՄԻՄՈՆՅԱՆ

Մայիսի 9-ը հիշատակի, հաղթանակի և վաղ առավոտից միմյանց ջերմորեն շնորհավորելու լավ առիթ է: ԵՊՀ վարչական կազմը՝ ռեկտոր Արամ Միմոնյանի գլխավորությամբ, թարմ ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրեց Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան գոյամարտում զոհված համալսարանականներին նվիրված հուշարձաններին:

[10.05.18] ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊԵՆԴՎՈՒՄ ԵՆ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԲԵՅՐՈՒԹ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պատվիրակությունն ապրիլի 21-28-ը աշխատանքային այցով գտնվում էր Լիբանանի Բեյրութ քաղաքում:

[10.05.18] «ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ PISA-Ի ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՇԱՏ ԱՆՍՈՎՈՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ». ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵՐՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«PISA-ն շատ կարևոր ստուգատես է և շատ կազմակերպությունների կողմից համարվում է կրթության որակի գնահատման չափանիշ», - այսօր մեզ հետ զրույցում անդրադառնալով Աշակերտների միջազգային գնահատման (PISA) ստուգատեսին՝ այսպիսի կարծիք հայտնեց ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության ամբիոնի դասախոս, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը:

[10.05.18] ԻՄ ՀԱՄՈՋՄԱՄԲ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ Է ԱՌԱՋ ՔԱՅԼՈՒՄ». **ՀՐԱՉՈՒՇԻ-ՄԱՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**

ԵՊՀ դասախոս Հրաչուհի-Մարի Պողոսյանը ծնվել է Իրաքում, սովորել Մեծ Բրիտանիայում, երկար ժամանակ ապրել և աշխատել է ԱՄՆ-ում, իսկ հետո սրտի կանչով տեղափոխվել հայրենիք։ Մասնագիտությամբ ֆիզիկոս, նախկինում Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալության (ՆԱՍԱ) աշխատակից Հրաչուհի-Մարի Պողոսյանը որոշեց, որ Հայաստանի մարդկային հզոր ներուժին պետք է ավելացնել ստեղծարար մտածողությունը, և որոշումն իրականացնելու համար դասընթացի պլան կազմեց ու սկսեց դասախոսություններ կարդալ հայաստանյան տարբեր բուհերում։

[11.05.18] ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՄԵՐՕՐՑԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախաձեռնությամբ ուսանողների համար դասախոսությամբ հանդես եկավ պատմ. գիտ. թեկնածու Սարգիս Գրիգորյանը։

[11.05.18] «1988 ԹՎԱԿԱՆՆ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆԻ ՎԵՐՋՆ ԷՐ, ԻՄԿ ՍԱ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆԻ ՄԿԻՋԲՆ Է». **ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ**

ԵՊՀ փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Աշոտ Ոսկանյանը մեզ հետ զրույցում խոսել է հիպիական շարժման, մարքսիզմի և վերջին իրադարձությունների մասին։

[11.05.18] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԻՆ. **«ԵՊՀ ՌԵՍՏԱՐՏԸ» ՔՆՆԱՐԿՈՒՄ ԷՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում «ԵՊՀ ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնությունը կազմակերպել էր քննարկում։ Հանդիպմանը մասնակցում էին Երևանի ավագանու անդամ Արայիկ Հարությունյանը, այլ բուհերի ուսանողներ, իսկ քննարկման առանցքում քաղաքական վերջին իրողություններն էին, «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքը, տարկետման իրավունքն ու կրթության որակի բարելավման հարցը։

[14.05.18] «ՎՍՏԱՀ ԵՄ, ՈՐ ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԿՏԵՄՆԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԵՐՏՈՂՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ». **ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ Է ԼԵՌԱՀՆՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ**

Մոսկ Դազարյանը սովորել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում։ 2017 թվականից նա «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակում դասավանդում է Լոռու մարզի Լեռնահովիտ գյուղի դպրոցում։

[14.05.18] ԵՊՀ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ Է ՎԵՐԸՆՏՐՎԵԼ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄՆԱՅԱՆԸ

ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի գիտխորհրդի նիստում 21 կողմ ձայնով ֆակուլտետի դեկան է վերընտրվել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Դումանյանը։ Նշենք, որ ընտրությունն անցկացվել է մայիսի 11-ին, որին ներկա է եղել ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը։

[14.05.18] «ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ՄԻՋԵՎ ԵՊՀ-Ն ՑՈՒՐՕՐԴԻՆԱԿ ԴԵՍՊԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԻՐԱԿԱՆԱՅՆՈՒՄ». **ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ**

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանն աշխատանքային այցով եղել է Իրանում ու Ավստրիայում։

[14.05.18] «ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ «ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆ» ՄԱՐԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺՆ Է, ՈՐՆ ԷԼ ՄԵՆՔ ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ԶԱՐԳԱՑՆԵԼ». **ՄԱԹԻԱՍ ՔԻՍԼԵՐ**

Մայիսի 14-ին Երևանի պետական համալսարանը և Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը համատեղ մեկնարկեցին «Գերմանիան՝ հետազոտության երկիր» խորագրով ցուցահանդեսը, որը 2 շաբաթ շարունակ կցուցադրվի Մայր բուհում։

[15.05.18] «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՏՎԵԼ Է ԱՎԵԼԻՆ, ՔԱՆ ԿԱՐՈՂ Է ԻՐԵՆ ԹՈՒՅԼ ՏԱԼ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐՈՒՄ». ԱՐԱՍ ՄԻՍՈՆՅԱՆ

ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին» խորագրով գիտաժողովը, որը նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Համագրային հայ կրթական և մշակութային միության հիմնադրման 90-ամյակին:

[15.05.18] «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐՆԻՍԱԺ-EXPO»-Ն՝ ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի ունեցավ 8-րդ անգամ անցկացվող «Հոգեբանական վերնիսաժ-EXPO» ցուցահանդեսը:

[16.05.18] ԱՅՍ ՏԱՐԻ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է, ԻՄԿ ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄՆ Է

«Այս պահի դրությամբ ԵՊՀ-ում գրանցվել է շուրջ 280 դիմորդ: Այս տարի ակնկալում ենք ունենալ մոտ 1500 դիմորդ: Որպես կանոն, առաջին տասն օրից հետո դիմորդները նոր սկսում են ակտիվանալ», - այսօր մեզ հետ զրույցում ասաց ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաչագան Գալստյանը:

[16.05.18] ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՂԻՆ «PETRI SOFIA» ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողուհի Մարիա Պետրոսյանը մասնակցել է «PETRI Sofia»-ի կողմից կազմակերպված միջազգային ամենամյա դպրոցին, որն անցկացվել է ապրիլի 18-24-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Մարիան մեզ հետ զրույցում պատմեց իր տպավորությունների և ձեռքբերումների մասին:

[16.05.18] ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԹԵՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ, ԼԵՋՎԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԷՐ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին և Համագրային հայ կրթական և մշակութային միության հիմնադրման 90-ամյակին նվիրված գիտաժողովը շարունակեց իր աշխատանքները:

[16.05.18] ԵՊՀ ՆՎԻՐՑԱԼՆԵՐԸ. ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ ԵՎ ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ

Երևանի պետական համալսարանը իր հիմնադրման օրվանից դարձել է մեր պատմության շրջադարձային իրադարձությունների լուռ վկան, կրթել է Առաջին Հանրապետության նորանկախ սերնդին, սովետական երիտասարդությանը, Երրորդ Հանրապետության քաղաքացիներին:

[16.05.18] ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՅՔՈՒՄ

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Բժշկական էթիկան Ֆեմիդայի կշեռքին» խորագրով քննարկում՝ ԵՊՀ և ԵՊՀՀ ուսանողների մասնակցությամբ:

[16.05.18] «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՂԻՐԸ» ԹԵՄԱՑՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ուսանողների համար «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս Ռոման Կարապետյանը:

[16.05.18] ՄԱՅՐ ԲՈՒՂԸ 99 ՏԱՐԵԿԱՆ Է. ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

1919 թ.-ի մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդն ընդունեց Երևանում համալսարան հիմնելու վերաբերյալ պատմական որոշումը: Ստեղծվելով ծանր ու դժվարին ժամանակներում՝ համալսարանը դարձավ մեր ժողովրդի ոգեղեն փարոսը, հույսն ու անուրջը: Համալսարանի հիմնադրումով

նաև հայ ժողովուրդը պատասխանեց ճակատագրին՝ ջարդին, եղեռնին ու ավերումին հակադրելով իր կառուցող, խորհող ու ստեղծագործող ոգին:

[16.05.18] «ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐ ԾՆՈՒՆԴ Է ԱՌԵԼ ՄԱՐԴՈՒ, ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՈՈ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ». ՖՐԱՆԶԵՍԿՈ ԱՆՅՈՒԼ

Իտալիայի Տրենտո քաղաքում ապրող և դասավանդող Ֆրանչեսկո Անյոլին, իր «Հետաքննություն Քրիստոնեության մասին» գրքում վերլուծելով համալսարանների դերն ու նշանակությունը մարդկության զարգացման գործընթացում, գրում է. «Համալսարանը քաղաքակրթության պատմության մեջ մի հստակ, օրիգինալ երևույթ է՝ միջնադարյան ամբողջ հասարակության մտքի աներևակայական թռիչքի արդյունքը: Հենց դա է վկայում այն, որ 1600 թ.-ին աշխարհում գործող համալսարանների թիվը հատում էր 100-ի սահմանը»:

[17.05.18] «ՄԻԻԹԱՐ ՄԵԲԱՍՏԱՅԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԵՊՀ ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Այսօր ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության և Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի նախաձեռնությամբ «Միիթար Մեբաստացի» կրթահամալիրի 7-րդ դասարանի աշակերտներն այցելեցին ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետ:

[17.05.18] ԵՊՀ-ՈՒՄ ԿԱՆՑԿԱՅՎԵՆ ՀԱՅԱԶԳԻ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԷՄԻԼ ԱՐԹՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ԵՊՀ-ում մայիսի 21-25-ը մաթեմատիկոս ուսանողների համար կանցկացվի հայազգի աշխարհահռչակ մաթեմատիկոս Էմիլ Արթինի գիտական ժառանգությանը նվիրված միջազգային դպրոց: Այն իրականացվելու է Հայկական մաթեմատիկական միության նախագահ, ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանի նախաձեռնությամբ:

[17.05.18] ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՏՐՎԻ 20% ԶԵՂԶ՝ «PERSONAL BRANDING» ՖՈՐՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մայիսի 19-ին Միկա մարզահամալիրում տեղի կունենա «Personal Branding Forum-2018»-ը (PBF):

[17.05.18] ՀԱՄԱՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ. «ԵՊՀ ՌԵՍՍԱՐՏԸ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ 6-րդ մասնաշենքում «ԵՊՀ ռեսուարտ» նախաձեռնությունը կրկին համաուսանողական քննարկում էր կազմակերպել:

[18.05.18] «ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ». ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԵՆՍԱԲԱՆ ՆԵԼԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ

Յորենի առանձին տեսակների հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Հնագիտական պեղումներով ժամանակին հայտնաբերվել են ցորենի ածխացած հատիկներ, և պարզվել է, որ 2,5 հազար տարի առաջ Արարատյան դաշտում մշակել են միահատիկ ու փափուկ ցորեններ: Հայաստանի տարածքում գարու մշակությունը սկսվել է 5-6 հազար տարի առաջ: Պեղումների ժամանակ հայտնաբերված հատիկների մաքրությունը և միատարրությունը վկայում են, որ մ.թ.ա. 9-6-րդ դարերում մշակել են բազմաշար գարու բարձրարժեք փոփոխակներ, որոնցից պատրաստել են զարեջուր:

[18.05.18] ՉԻՆԱՐԵՆԻՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՃԱՌԸ ԵՊՀ ՌԻՍԱՆՈՂՈՒՀՈՒՆՆ ԷՐ

Մայիսի 11-ին տեղի է ունեցել արդեն 5-րդ անգամ անցկացվող ամենամյա «Չինարենի կամուրջ» մրցույթը, որտեղ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Մանե Գասպարյանը հաղթող է ճանաչվել «Լավագույն ճառ» անվանակարգում:

[18.05.18] ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑ-ՕՍԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑ-ԱԲՆԱԶԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ուսանողների համար «Մերօրյա հակամարտություններ. վրաց-օսական և վրաց-աբխազական կոնֆլիկտներ» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի շրջանավարտ Լենա Զաքարյանը:

[18.05.18] ԵՊՀ ԹԱՆԳԱՐԱՆՆ ԱՍԲՈՂՋ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՆԵՆՈՒՄ Է ՇՈՒՐՋ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԱՅՑԵԼՈՒ

Թանգարանների միջազգային օրը՝ մայիսի 18-ը, նշում է աշխարհի ավելի քան 150 երկիր: Այս տոնական օրվան ընդառաջ թանգարաններում այցելուների թիվը մեծապես ավելանում է:

[21.05.18] ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԾԱՆՈԹԱՆԱՆ ՀԱՅԱԶԳԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԷՄԻԼ ԱՐԹՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ հայ-հնդկական S2S գերազանցության կենտրոնում տեղի ունեցավ հայազգի աշխարհահռչակ մաթեմատիկոս Էմիլ Արթինի գիտական ժառանգությանը նվիրված միջազգային դպրոցի բացումը: Այն ԵՊՀ-ում անցկացվում է Հայկական մաթեմատիկական միության նախագահ, ԵՊՀ-ի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանի նախաձեռնությամբ: Նշենք, որ մաթեմատիկոս ուսանողների համար Էմիլ Արթինի գիտական ժառանգությանը նվիրված միջազգային դպրոցը ԵՊՀ-ում անցկացվում է առաջին անգամ, որը կտևի մինչև մայիսի 25-ը ներառյալ:

[21.05.18] ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հյուրընկալեց Կիպրոսի համալսարանի ռեկտոր Կոստանդինոս Խրիստոֆիդեսին:

[21.05.18] ԵՊՀ ԹԻՍԸ ԺՆԵՎՈՒՄ ԿՄԱՄՆԱԿՑԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂ- ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓԱԿԶ ՓՈՒԼՆ

Առաջին անգամ մասնակցելով Նելսոն Մանդելայի անվան մարդու իրավունքների համաշխարհային դատախաղ-մրցույթին՝ ԵՊՀ թիմն առաջին փուլի արդյունքներով հայտնվել է աշխարհի լավագույն թիմերի շարքում և հնարավորություն ստացել մասնակցելու մրցույթի եզրափակիչ փուլին:

[21.05.18] ԵՊՀ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՐԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի վերակառուցված մարզահամալիրը շահագործման հանձնվեց 2016 թ.-ի դեկտեմբերին: Շահագործումից հետո այն հանդես եկավ նոր որակով, նոր չափորոշիչներով: Մարզահամալիրի բաղկացուցիչ մասն է ժայռամագլցման հատուկ պատը, որը եզակի է տարածաշրջանում: ԵՊՀ ֆիզդաստիարակության ամբիոնի և «Ապառաժ» ակումբի հիմնադիր նախագահ Մուրեն Սեպանյանի ջանքերի շնորհիվ ավելի քան հիսուն տարվա ընդմիջումից հետո անցկացվեց Հայաստանի ժայռամագլցման առաջնությունը, որին մասնակցեցին նաև համալսարանականները: Բոլորովին վերջերս մարզահամալիրը դարձավ սուսերամարտի եվրոպական առաջնության «թատերաբեմ»:

[22.05.18] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ «ERASMUS+»-Ի ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՇԱԲԱԹԻՆ

Մայիսի 6-12-ը ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Արմեն Թոչունյանը և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ, դեկանի տեղակալ Արթուր Իսրայելյանն այցելել են Գերմանիա:

[22.05.18] ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ

ԵՊՀ ռադիոֆիզիկայի կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ազգային, ՀՀ ինժեներական և Միջազգային ճարտարագիտական ակադեմիաների ակադեմիկոս Վլադիմիր Հարությունյանին շնորհվել է «FOR USEFUL LABOUR» ոսկե մեդալ:

[22.05.18] ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ Է ՎԵՐՐՆԱՏՐՎԵԼ ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆԸ

Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի նիստում փակ, գաղտնի քվեարկությամբ, 32 կողմ և 3 անվավեր ձայների հարաբերակցությամբ ֆակուլտետի դեկան է վերընտրվել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արծրուն Ավագյանը:

[23.05.18] «ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՋՈՒՄ Է ԱՊՐԵԼ ՈՒ ԱՐԱՐԵԼ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ԴՐԱ ՀԱՍՏԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ». ՖԻԶԻԿՈՍ ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի 2-րդ կուրսի մագիստրանտ Գոր Նիկողոսյանն այն տաղանդավոր երիտասարդներից է, ով չի բավարարվում համալսարանական կրթությամբ և համագործակցում է միջազգային գիտական առաջատար կառույցների հետ:

[23.05.18] ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵՑԻՆ ՁԲՈՍԱՎԱՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մայիսի 22-ին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ «Guides' skills» (Զբոսավարների հմտություններ) խորագիրը կրող ծրագրի ամփոփման արարողությունը:

[23.05.18] ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՑ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՍՏԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դասախոս Մերուժան Հարությունյանն այսօր ԵՊՀ-ում հանրային քննարկմանը ներկայացրեց իր կազմած «Բարոյակարգ հաստատելու դրույթները» վերնագրով 18 էջանոց առաջարկությունների ձեռնարկը:

[24.05.18] ՎԵՐՆԱԽԱՎԻ ԵՐԵՄԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԾԱՌԱՅԵՆ. ԱՅՐ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԻՏԱՐԿՎԻ ԻՐԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ. ԵՊՀ ԴԱՍԱԽՈՍ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՑԱՆ

Այս տարի ԵՊՀ-ն դիմորդներին հատկացնում է 339 անվճար տեղ, որից 38-ը վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդներինն է: Ըստ այդմ` անվճար համակարգի 10%-ը հատկացվում է բանակից զորացրվածներին: Բացի դրանից` այն դիմորդները, ովքեր որոշակի ժամկետում իրականացրել են մարտական հերթապահություն, և որոնց առաջադիմությունը գերազանցել է 10 միավորը բակալավրիատում և 14 միավորը` մագիստրատուրայում, կունենան ուսման վարձի 30%-ի չափով զեղչի հնարավորություն:

[24.05.18] «ԲԱՐՁՐԱԳՈՒՑՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՐՁՆԵԼՆ ԻԴԵԱԼԱԿԱՆ ԿԼԻՆԻ, ԲԱՅՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ՊԱՀԻՆ ԱՅՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ». ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. ՄԻՍՈՆՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ Tert.am ԿԱՅՔԻՆ

Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Միմոնյանը բարձրագույն կրթությունն անվճար դարձնելը միայն կողջունի:

[24.05.18] «ՄԵԾ Է ԵՂԵԼ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ». ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Այսօր Հայ օգնության միության (ՀՕՄ) կենտրոնական վարչությունը ԵՊՀ-ում կազմակերպել էր «Հայ կանանց դերը զարթոնքից հանրապետություն» խորագրով խորհրդաժողով` նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակին:

[24.05.18] ՄԵՐՕՐՑԱ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴ ԿԱՆԳԱՌՆ ՈՒԿՐԱԽԱՆ ԷՐ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Մերօրյա հակամարտությունները» խորագրով դասընթացաշարի շրջանակում տեղի ունեցավ «Ուկրաինական ճգնաժամը» խորագրով դասախոսություն:

[24.05.18] **ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակում է «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագրի շրջանակում իրականացնել սեմինար-դասընթացների շարք:

[25.05.18] **ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱՆՔ ԵՊՀ-ՈՒՄ. ՏԱՐՀԱՆՎՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ (ՏԵՄԱՆՅՈՒԹ)**

Այսօր ԵՊՀ քաղաքաշտպանության ամբիոնն ուսումնավարժանք էր անցկացնում, որին մասնակցում էին այն ֆակուլտետների ուսանողները, ովքեր տվյալ կիսամյակում անցնում են «Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» առարկան:

[25.05.18] **«ԱՅՍ ՏԱՐԻՆ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ Է ԹԵ՛ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԹԵ՛ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ». ԴԵՍՊԱՆ ԳԵՈՐԳԻ ՄԱԳԱՆԵԼԻԶԵ**

Այսօր ԵՊՀ-ում Թբիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր Գեորգի Օթխմեզուրին «Վրաստանի անկախության 100 տարվա ճանապարհ» խորագրով դասախոսություն ներկայացրեց:

[25.05.18] **«ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՄԵՐՏ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵՆՔ ԵՎ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԶԻՆԵԼ». ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դոցենտ, աշխարհ. գիտ. թեկնածու Նարեկ Հարությունյանն այս պահին ստանձնել է ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պաշտոնը: Մեզ հետ զրույցում պարոն Հարությունյանը ներկայացրել է ծրագրային հիմնական դրույթները, որոնք կիրառործի, եթե հայտարարված մրցույթի արդյունքներով ստանձնի ամբիոնի վարիչի պաշտոնը:

[25.05.18] **«ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՄԵՐԸ ՄԵՆՔ ԼԱՎ ԸՆԿԱԼԵՆՔ». ԵՊՀ ՌԵԿՏՈՐ**

Այսօր ԳԱԱ-ում մեկնարկեց «Հայաստանի Հանրապետություն-100» խորագրով միջազգային գիտաժողովը, որը նվիրված է Հայաստանի Հանրապետության հռչակման և Մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձին:

[25.05.18] **ԵՊՀ ՈՒԳԸ-Ն ԱՄՓՈՓԵՑ ԱՆՑՆՈՂ ԿԻՍԱՄՅԱԿ**

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ընկերության՝ 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի ընդլայնված նիստը:

[25.05.18] **ԲԵՍՈՒՄ ՀՆՉՈՒՄ ԷՐՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԵՐ**

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ ԵՊՀ-ին նվիրված երիտասարդական երգի մրցույթի եզրափակիչ փուլը:

[26.05.18] **ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արամ Մանուկյան նամականի (1904-1915)» գրքի շնորհանդեսը:

[26.05.18] **ԵՊՀ-Ն ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ**

Այսօր ԵՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի առաջին Հանրապետության մեծերի ու նվիրյալների թոռների ու ծոռների հետ:

[26.05.18] **ԵՊՀ-Ի ԲԵՍՈՒՄ ՄԻԱՀՅՈՒՄՎԵԼ ԷՐՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

Այսօր ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի և Վրաստանից ժամանած վրացական բանահյուսության քառյակի համատեղ համերգը:

[29.05.18] ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի հայտարարությունը, քաղաքական բնույթի պահանջները զուգորդվել են բազմապիսի ճնշումների գործադրմամբ, մասնավորապես փակվել են ԵՊՀ-ի մուտքերը, սահմանափակվել է ԵՊՀ աշխատակիցների ազատ տեղաշարժման իրավունքը, որի հետևանքով խաթարվել է ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի առողջությունը: Կարծում ենք, որ նմանօրինակ վարվելակերպը ուղղորդվում է ՀՀ նորընտիր իշխանությունների կողմից, ինչը համարում ենք անընդունելի և վտանգավոր:

[29.05.18] ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏԻ ԸՆԴՀԱՆՍՈՒՄՆԵՐՆԵՐ «ԵՊՀ ՌԵՍՏԱՐՏ» ՆԱԽԱԶԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ՏԵՍԱՆՑՈՒԹ)

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ռեկտորատի ընդլայնված նիստ, որի օրակարգում մեկ հարց էր՝ քննարկել «ԵՊՀ ռեստարտ» նախաձեռնության կողմից արված հայտարարությունը, որով պահանջվում էր ռեկտոր Արամ Սիմոնյանի հրաժարականը, Հոգաբարձուների խորհրդի լուծարումը, Ֆինանսական աուդիտի անցկացումը, ինչպես նաև ՈԻԲ-ի և Արհմիության գործունեության կասեցումը:

[29.05.18] ԵՊՀ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ. «ԵՊՀ ՌԵՍՏԱՐՏ» ԾԻՆՑ ԶԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԵՊՀ ռեստարտի» կեղծ հայտարարությունները, որոնք ստացվել են Գնումների պլանը չհասկանալուց, որտեղ նշվում են գնման ձևը, քանակը՝ մեկ տողով, եթե դա տարվա կտրվածքով է, իսկ բացվածքը երևում է հաշիվ-ապրանքագրերում, որոնք էլ յուրաքանչյուրի մասով ներկայացվում են:

[29.05.18] ԵՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ (ՏԵՍԱՆՑՈՒԹ)

Այսօր «ԵՊՀ ռեստարտ» նախաձեռնությունը մի շարք պահանջներով սկսել է բողոքի ակցիաներ իրականացնել: Օրակարգային և մի շարք այլ հարցերի վերաբերյալ քննարկում անցկացնելու համար ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հանդիպել է նրանց հետ և պատասխանել հարցերին:

[30.05.18] ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2018 թ. մայիսի 29-ից «ԵՊՀ ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության անդամները, սահմանազանցելով խաղաղ հավաքների անցկացման իրենց իրավունքը, մտել են ԵՊՀ վարչական համալիր և ակնհայտ անհարգալից ու արհամարհական վերաբերմունք դրսևորելով ԵՊՀ աշխատակազմի նկատմամբ՝ ներկայացրել են անհիմն ու անիրավաչափ պահանջներ, խաթարել են ԵՊՀ բնականոն գործունեությունը, զբաղեցրել են վարչական տարածքներ, բռնություն են գործադրել ԵՊՀ ռեկտորի նկատմամբ, ինչի պատճառով ներկայումս նա գտնվում է վերականգնման փուլում և վիճակը գնահատվում է ծանր:

[31.05.18] ԵՊՀ-ՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գրադարանի ձեմասրահում տեղի ունեցավ «Intership Hunt. որոնի՛ր և գտի՛ր քո հնարավորությունը» խորագրով տոնավաճառը:

[31.05.18] ALL YOU NEED IS PR. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այսօր՝ մայիսի 31-ին, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսական ծրագրի 1-ին կուրսի ուսանողները կազմակերպել էին հանդիպում դասախոսների և շրջանավարտների հետ՝ համակողմանի ներկայացնելու մասնագիտության կարևորությունը, ծրագրի բովանդակությունը և շրջանավարտների հաջողության պատմությունները:

[01.06.18] ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱԶԳԻ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԷՄԻԼ ԱՐԹՐԻՆԻ 120-ԱՄՅԱԿԻՆ

ԵՊՀ-ում անցկացվում է հայազգի աշխարհահռչակ մաթեմատիկոս Էմիլ Արթինի 120-ամյակին նվիրված միջազգային խոշոր գիտաժողով: Նշենք, որ Էմիլ Արթինի գիտական ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովը մեկնարկել է մայիսի 27-ից: Այն անցկացվում է Հայկական մաթեմատիկական միության

նախագահ, ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանի նախաձեռնությամբ:

[01.06.18] «ԴԵՄ ԵՆՔ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԻՆ». ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

«ՀՀ զինապարտության մասին» նոր օրենքում տարկետման իրավունքին վերաբերող դրույթների, սահմանված չափանիշների, ինչպես նաև Մայր բուհում վերջերս ծավալված գործընթացների մասին լրագրող Վարդուհի Զաքարյանը զրուցել է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վահրամ Դումանյանի հետ:

[01.06.18] «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՌՈՋ Է, ԱՅՆ ՆՄԱՆ Է ԱՍՏՂԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴՈՒ». ՌՈՒԲԵՆ ԵՍԱՅԱՆ

ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի 2-րդ կուրսի ուսանող Ռուբեն Եսայանը «Յուրթուր»-ում ունի իր հաղորդումն ու ալիքը: Ալիքն ունի մոտ 30.000 հետևորդ և 6 միլիոն հանրագումարային դիտումներ: Մեզ հետ զրույցում Ռուբենը պատմեց յուրօրյան տիրույթի զաղտնիքների, հայկական «Յուրթուր»-ի առանձնահատկությունների և յուրօրյան ալիք ունենալու առաջին երեք քայլերի մասին:

[04.06.18] ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՊՀ-ՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԻՒՀ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՄԱՄ ԽՈՍԵՅՆԻՒ ՄԱՀՎԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Այսօր Մայր բուհում Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնը և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը համատեղ կազմակերպել էին ԻՒՀ հիմնադիր, հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի մահվան 29-րդ տարելիցին նվիրված գիտաժողով:

[04.06.18] ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԴԱՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Միջազգային հարաբերություններ» բաժնում ինքնատիպ քննություն էր:

[01.06.18] «ԵՊՀ-Ն ՈՒՆԻ ՀՐԱՇԱԼԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ, ԲԱՅՑ ԿԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՂԵՐԻ ՊԱԿԱՍ». ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՎՅԱՆ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող Վարդան Մարտիկյանը ներկայումս մագիստրոսական կրթություն է ստանում Բուրգունդիա պատմական շրջանի վարչական կենտրոն Դիժոնում: Վարդանի հետ զրուցել ենք մասնագիտության ընտրության, կրթության առանձնահատկությունների, երկու համալսարանների տարբերությունների և նրա հետագա անելիքների մասին:

[04.06.18] ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ

Այսօր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանը 23 կողմ, 0 դեմ ձայներով վերընտրվեց ֆակուլտետի դեկան:

[04.06.18] ՀԱՅԱԶԳԻ ՀԱՅՏՆԻ ԴԱՍԱԽԱԶ ՆԻԿՈԼԱՍ ՔՈՒՄՁԱՆԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում հյուրընկալվել էր հայազգի իրավաբան, Միջազգային քրեական դատարանում (ICC) և բազմաթիվ միջազգային տրիբունալներում (Սիեռա Լիոնե, Կամբոջա, Հարավսլավիա) միջազգային քրեական գործերով հանդես եկած հայտնի դատախազ Նիկոլաս Քումջանին:

[04.06.18] ԱՅՍ ՏԱՐԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ ԿՐԿՆԱԿԻ ՆՎԱԶԵԼ Է

«Բակլավրիատի դիմում-հայտերի ընդունելության առաջին փուլում ԵՊՀ է դիմել 1.519 դիմորդ, իսկ նախորդ տարի՝ նույն ժամանակահատվածում, ԵՊՀ է դիմել 2.632 դիմորդ», - մեզ հետ զրույցում ասաց ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաչագան Գալստյանը:

[04.06.18] ԵՊՀ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Այսօր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ Մանրէաբանական կենսատեխնոլոգիայի և կենսավառելիքի նորարարական կենտրոնի ներկայացումը, որի ընթացքում ուսանողները ծանոթացան գերժամանակակից վերջին սերնդի սարքավորումներին (անթթվածնային խցիկ, գերցածր ջերմաստիճանային տիրույթի սառնարան, փուլացայտերանգային մանրադիտակ, գազային և հեղուկ քրոմատագրիներ, լաբորատոր կենսառեակտոր և այլն), ինչպես նաև լաբորատորիայում իրականացվող աշխատանքներին:

[04.06.18] ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԷՐ ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ (ՏԵՍԱՆՅՈՒԹ)

Այսօր ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում ՀՀ առաջին տիկին, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Աննա Հակոբյանի հետ:

[04.06.18] ԵԱՀԿ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՋ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան»-ի նախաձեռնությամբ և ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության աջակցությամբ «ՀՌԿԿ-Հայաստան»-ի գրասենյակում տեղի ունեցավ «ԵԱՀԿ պատմական դերը տարածաշրջանային կառավարման մեջ» խորագրով հանրային դասախոսություն: Դասախոսության բանախոսն էր Պրահայում ԵԱՀԿ փաստաթղթային կենտրոնի ղեկավար, չեխ դիվանագետ Յան Պլեշինգերը:

[05.06.18] ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՍՏԱՑԱՆ

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ Իրավաբանական կլինիկայի դասընթացներն ավարտած ուսանողների վկայագրերի հանձնման արարողությունը: Շուրջ ինն ամիս ուսանողները կլինիկայում իրավաբանական ծառայություններ էին մատուցել սոցիալապես անապահով քաղաքացիներին:

[05.06.18] ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎՄ 5 ՏԱՐԻ ԿՂԵԿԱՎԱՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի նիստի օրակարգում մեկ հարց էր՝ ֆակուլտետի ղեկանի ընտրություն, որին ներկայացված էին պրոֆեսորներ Հայկ Սարգսյանի և Միքայել Միքայելյանի թեկնածությունները:

[05.06.18] ԵՊՀ ՊՐՈՌԵԿՏՈՐ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ԵՎ ԴԱՍԱԽՈՍ ԿԱՐԵՆ ՔԵՌՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՅԱՆԱԿԻՆ

ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գեղամ Գևորգյանը և Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դասախոս Կարեն Քեռյանը «Որոշ օրթոգոնալ շարքերի գուգամիտության և միակության հարցեր» գիտական հոդվածների շարքի համար արժանացել են ՀՀ նախագահի մրցանակին:

[06.06.18] ՖՐԱՆՍԻԱՅԻ ԷՔՍ ՄԱՐՍԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՑ ԵՊՀ-ՈՒՄ

Այսօր ԵՊՀ իրանագիտության ամբիոնում «Մի հարացույցի տրոհո՞ւմ, թե՞ պահպանում. պարսկերենի և տաջիկերենի օրինակի վրա» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ Էքս Մարսել համալսարանի իրանագիտության բաժնի վարիչ, պրոֆ. Հոմա Լեսան-Փեգեշին:

[07.06.18] «ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՋ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԵՆ ԴԱՐՁՐԵԼ». ՊՈՒԼԻՑԵՐՅԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԵՌԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ

ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում այսօր տեղի ունեցավ հանդիպում հայտնի լրագրող, Պուլիցերյան մրցանակի եռակի դափնեկիր, «The Boston Globe» պարբերականի հետաքննական թիմի հիմնադիր անդամ Սթիվեն Քյուրքյանի հետ:

[08.06.18] ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան դահլիճում Բուրգոնի Ֆրանշ-Կոմտե դաշնային համալսարանի պատվիրակության անդամները ներկայացրին մագիստրոսական մի շարք ծրագրեր:

[09.06.18] Ի ՊԱՏԱՄԽԱՆ LURER.COM ԿԱՅՔԻ՝ 08.06.18 Թ. ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ. ԵՊՀ «ՀՅՈՒՐԵՐԻ ՏՈՒՆ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Lurer.com կայքը հրապարակել է հարցազրույց փաստաբան Ալեքսանդր Միրունյանի հետ, որը ԵՊՀ-ին մեղադրում է «Հյուրերի տուն» մասնաշենքը իբր շուկայական գնից անհամեմատ էժան վաճառելու մեջ: Շատ ցավալի է, որ լրատվամիջոցը երկրորդ կողմին չի դիմել պարզաբանման համար, քանի որ հրապարակվածը բացահայտ զրպարտություն է. «Հյուրերի տուն» մասնաշենքի վաճառքի գինը ԵՊՀ-ն չի որոշել:

[11.06.18] ՆԵՎԱԴԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԵՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԷԻՆ «ԹԱՎՇՅԱ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ

Այսօր ԵՊՀ կոնֆլիկտաբանության կենտրոնում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում: Քննարկմանը ներկա էին Նևադայի համալսարանի պրոֆեսոր, բազմաթիվ գրքերի հեղինակ Պերճ Բերբեյանը (Բերբերոյլին) և Նևադայի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները:

[11.06.18] ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ԵՊՀ շրջանավարտների մեծամասնությունը ավարտում է համալսարանը՝ մասնագիտական նոր արկներ ձեռք բերած: Մենք գրուցեցինք ԵՊՀ 6 ֆակուլտետների՝ Արևելագիտության, Իրավագիտության, Ժուռնալիստիկայի, Միջազգային հարաբերությունների, Մաթեմատիկայի և մեխանիկայի լավագույն շրջանավարտների հետ:

[12.06.18] ՏՎՅԱԼԱԳԵՏՆԵՐՆ ԱՅՍՕՐ ՄԵԾ ՊԱՀԱՆՁԱՐԿ ՈՒՆԵՆ. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ

Ysu.am կայքը հարցազրույց է արել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանի հետ:

[12.06.18] ԻՆՉՊԵՍ «ԶՎԱՆԵՆԱԼ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

Հեռախոսազանգ՝ «Բարև Ձեզ, վաղը՝ ժամը 14:00-ին, կարող եք գալ հարցազրույցի»: Երբեմն այս խոսքերին ավելի շատ ենք սպասում, քան սիրո խոստովանությանը: Նշանակում է՝ մեր CV-ն նկատել են, և այժմ մենք հնարավորություն ունենք ստանալու այդքան սպասված աշխատանքը: Սակայն, երբ հաճելի զգացողություններն անցնում են, իսկ հարցազրույցի պատասխանատու պահն էլ մոտ է, մեզ հաճախ այնպիսի տագնապ և անհանգստություն են համակում, որոնք չկառավարելու դեպքում հնարավոր է՝ լավագույնս չներկայանանք գործատուին կամ հանդիպումը տանուլ տանք: Ո՞րն է մեր անհանգստության գլխավոր պատճառը: Դե, իհարկե, անորոշությունը: Անհանգստության հաղթահարմանը կարող են օգնել մի շարք օգտակար գործողություններ:

[12.06.18] ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂ, ԲԵՐՔԱՀԱՎԱՔ, ԿԻԹԱՌ, ԱՇԽԱՏԱՆՔ, ԻՆՔՆՈՒՍՈՒՑՈՒՄ. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Այս տարի ԵՊՀ-ում քննական շրջանն ավարտվում է հունիսի վերջին: Հուլիսի սկզբից սկսվում է ուսանողների ամառային արձակուրդը: Մենք փորձեցինք պարզել, թե ինչպես են կազմակերպելու ամառային հանգիստը ԵՊՀ ուսանողները:

[12.06.18] ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՈՒՄԲՈԼԴՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԵՊՀ-Ի ՄԻՋԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ի հետ «Erasmus+» ծրագրի համագործակցության շրջանակում ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնը հյուրընկալել է Գերմանիայի Հումբոլդտի համալսարանի (Humboldt University of Berlin) ուսանողներին:

[12.06.18] ՌՈՒՄԵՐԵՆԸ՝ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԵՊՀ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՀՈՒՆԻՄԻ 18-ԻՑ ԿՄԵՎՆԱՐԿԵՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴԱՄՐՆԱՅՆԵՐԸ

Արդեն 10 տարի է, ինչ ԵՊՀ ռուսական կենտրոնը համալսարանականների երեխաների համար կազմակերպում է ռուսերենի դասընթացներ՝ նախապես մշակած և պատրաստած ծրագրով, որը կազմված է հիմնականում խաղային մեթոդաբանության վրա: Դասընթացի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար զրուցել ենք Ռուսական կենտրոնի տնօրեն Արուսյակ Ներսեսյանի հետ:

[13.06.18] ԵՊՀ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՐԱԾԵԼ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցին Քրիստոսավանդ ուսմունք ժառանգած ու պահպանած իր երկհազարամյա պատմության ընթացքում ունեցել է և ունի ուղղափառ դավանանք, հավատարիմ է մնացել եկեղեցական սրբազան ավանդությանը, ստեղծել է քրիստոնեական բազմաշերտ մշակույթ:

[13.06.18] ՀԱՅՏՆԻ ԼՐԱԳՐՈՂ ՇԵՐԻԼ ՌԻԴԸ ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր Ժուռնալիստիկայի ֆակուլտետը հյուրընկալել էր Նյու Յորքի Սիրակյուզի համալսարանի տպագիր և օնլայն լրագրության ֆակուլտետի դասախոս, գրող Շերիլ Ռիդին և նրա ամուսին, «Chicago Tribune» թերթի նախկին խմբագիր Գրեգորի Ստրիչարչուկին:

[13.06.18] ՂԱԶԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԴԱՄԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՅ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ Ղազախստանի ֆինանսների նախարարության հաշվապահական մեթոդաբանության վարչության պետ, ԱՊՀ երկրների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության խորհրդատվական խորհրդի նախագահ Արմանաի Բեկտուրովան:

[14.06.18] «ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ Է». ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետը սկսում է նոր, ոչ ֆորմալ հարցազրույցների շարք, որը հազեցած կլինի ամենասիրելի դասախոսների մասին պատմող ամենահետաքրքիր բացահայտումներով: Մեր առաջին հյուրն է պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Արշակ Յուրիի Բալյանը:

[14.06.18] ԵՊՀ-ՀՈՒՄԲՈԼԴՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. ՄԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկում, որին մասնակցում էին ԵՊՀ-ի և Բեռլինի Հումբոլդտի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները:

[14.06.18] ԵՊՀ ԱՄՊԻՐԱՆՏԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԲՈՆՈՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտներ Սուսաննա Գազինյանը և Էլմիրա Մելյանը մասնակցել են «Կանայք գիտության մեջ» ծրագրի շրջանակում Չեխիայի Հանրապետության Բոնոյի տեխնոլոգիայի համալսարանում անցկացված գիտական աշխատանքներին:

[15.06.18] **ՉԻՆԱՐԵՆ ՍՈՎՈՐՈՂ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՑԱԿԱՆՆԵՐ**

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի չինարենի և չինական մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ չինարեն սովորող ուսանողների ավարտական վկայականների հանձնման արարողությունը:

[15.06.18] **ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆԸ ՀԱՆՂԻՊԵՑ ԹՈՒՐՔ ՀԱՅՏՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ՀԵՏ**

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանը հյուրընկալեց ԱՄՆ Մասաչուսեթսի Քլարք համալսարանի պրոֆեսոր, թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամին:

[15.06.18] **ԵՊՀ-ՈՒՄ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ. «ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ» ԲԱԺԻՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

ԵՊՀ մինչև համալսարանական կրթության վարչության «Նախապատրաստական դասընթացներ» բաժինը կատարում է 2018-2019 ուստարվա դիմորդների ընդունելություն հանրակրթական բոլոր առարկաներից:

[15.06.18] **ԵՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԹՎԱՊԱՏՈՒՄ-2018» ԿՈՆՖԵՐԱՆՍԸ**

Հունիսի 15-16-ը ԵՊՀ-ում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը «Ինտերնյուս»-ի հետ կազմակերպել է հինգերորդ «Թվապատում» մեդիա կոնֆերանսը:

[15.06.18] **ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱԿԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՑ 24-Ը ՍՏԱՑԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄ**

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2017-2018 ուստարվա մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Նշենք, որ այս տարի 51 շրջանավարտից 24-ը ստացան գերազանցության դիպլոմ:

[15.06.18] **ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ. «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ Է ՍՆՈՒՑՎՈՒՄ»**

Այսօր Մայր բուհի գիտխորհրդի նիստերի դահլիճում ԱՄՆ Մասաչուսեթսի Քլարք համալսարանի պրոֆեսոր, թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամը հանդիպեց ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ուսանողների և դասախոսների հետ: Նշենք, որ հանդիպումը կազմակերպվել էր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ:

[15.06.18] **ԵՊՀ 3-ԴՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄՈՒՏՔԸ ՓԱԿՎԵԼՈՒ Է**

Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի ֆակուլտետների մասնաշենքի գլխավոր մուտքը վաղվանից փակվելու է: Մուտքի աստիճանները շատ հին են, և փլուզման վտանգ կա: Վաղվանից կսկսվեն մուտքի աստիճանների և բազրիքների վերանորոգման աշխատանքները: Մասնաշենք մուտքը լինելու է շենքի հետնամասից:

[18.06.18] **ՀԱՅՈՑ ԼԵԶՎԵՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

Այսօր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով միջոցառում, որի ընթացքում Համազգային հայ կրթական և մշակութային միության (ՀՀԿՄՄ) նախաձեռնությամբ լավագույն ուսանողներին Հակոբ Կարապենցի անվան կրթաթոշակ հանձնվեց:

[19.06.18] **«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԻ». ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏ**

ԵՊՀ լրագրող Անի Պողոսյանը Գերմանիայի Բունդեսթագում մասնակցել է IPS (Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ) ծրագրի կրթաթոշակակիրների համար կազմակերպված հանդիպմանը:

[19.06.18] **«ՖԻԶԻԿՈՍ» ԿԱՏՈՒՆ, ՈՐՆ ԱՊՐՈՒՄ Է ԵՊՀ-ՈՒՄ**

Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Վլադիմիր Ֆեոդորի Մորոզովին իր աշխատասենյակում պահում է տասնմեկամյա Մաթիլդա կատվին: Կատվի անունը «Փոքրիկը և

Կառլսոնը» մուլտֆիլմից է: Ըստ Մորոզովի՝ Մաթիլդան ֆիզիկայից ավելի շատ գիտելիքներ ունի, քան որոշ ուսանողներ:

[19.06.18] «ՍՈՑՔԵՄՓ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԿՈՆՖԵՐԱՆՄՆ ԱՅՍ ՏԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀՅՈՒՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն արդեն 4-րդ տարին է, ինչ նախաձեռնում է «ՍոցՔեմփ» սոցիալական ոչ ֆորմալ կոնֆերանսը կամ, ինչպես կազմակերպիչներն են ասում, չկոնֆերանսը: Այն մասնագիտական հարթակ է բոլոր նրանց համար, ովքեր ունեն վերլուծական ասելիք՝ կապված հասարակական տարբեր խնդիրների ու դրանց լուծման ուղիների հետ: Հունիսի 30-ին տեղի ունենալիք միջոցառման մասին գրուցել ենք Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ Տաթևիկ Կարապետյանի հետ:

[21.06.18] ՊԱՏԵՐԱԶՄ, ԲՈՒԺՈՒՄ, ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՎ ՏԱՌԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԼԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ, ԵՊՀ Լ. ԱՌՈՒՍՏԱՍՅԱՆԸ՝ ԻՐ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ անվտանգության պետ Լյովա Առուստամյանի անցած ճանապարհի մասին քչերը գիտեն: Նրա ուղին սկսվում է պատերազմի դաշտից և հասնում է մինչև համալսարանում կարգ ու կանոնի պահպանում: Մեզ հետ զրույցում նա պատմեց իր անցած դժվարին ճանապարհի և համալսարանում սիրելի դարձած աշխատանքի մասին:

[21.06.18] «ԵՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍ ԼԻՆԵՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԾԱՅՐԱՆԵՂ ՆՎԻՐՈՒՄՈՎ» ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՑԱՆ

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն Քնարիկ Վարդանյանը մեզ հետ հարցազրույցում խոսել է կլինիկայի ստեղծման, գործունեության և դրա դասընթացներին մասնակցող ուսանողների մասին:

[21.06.18] ՄԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԳՈՐԾԵԼՈՒ Է ՄՆՆԴԻ ՆՈՐ ԿԵՏ. «ԱՐՏ ԼԱՆԶ» ԳԱԼԻՄ Է ԵՊՀ

ԵՊՀ-ի և «Արտ Լանչ» ընկերության համագործակցության շրջանակում ֆիզիկայի ֆակուլտետի մասնաշենքում կբացվի նոր ճաշարան, որը կգործի սեպտեմբերի 1-ից:

[21.06.18] ԱՇԽԱՏԵՐՆԵՐԸ՝ ԵՊՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը Պալեանների անվան դահլիճում հյուրընկալել էր «Երևակ» կրթահամալիրի ավագ դասարանների աշակերտներին:

[22.06.18] ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՓՈՐՁ. ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ-2018. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Այսօր Հայաստանի ամերիկյան համալսարանում մեկնարկեց «Հայաստան-2018. իրողություններ և հեռանկարներ» թեմայով միջազգային գիտաժողովը, որի հիմնական նպատակն է Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները մասնագիտական վերլուծությունների շնորհիվ ակադեմիական դաշտ բերել, ինչպես նաև փորձել գիտական լեզվով բացատրել այն հանրային իրողությունները, որոնք ունենք հիմա:

[22.06.18] 5 ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՄ ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՑԱՆԸ

«Եթե ես լինեի ուսանող և ունենայի այսպիսի լայն-լայն-լայն ընտրության հնարավորություններ, ամենայն հավանականությամբ, կմնայի հասարակագիտության ոլորտում»:

[22.06.18] ՆՈՐ ԵՐԳԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՄՐՅՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը պարզևստրեց ԵՊՀ-ին նվիրված երիտասարդական երգի մրցույթի հաղթողներին և խրախուսական պարգևների արժանացած մասնակիցներին:

[23.06.18] «ՀԱՅԱՍՏԱՆ-2018. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ, ՕՐ 2-ՐԴ
Հայաստանի ամերիկյան համալսարանում շարունակվում է «Հայաստան-2018. իրողություններ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովը:

[25.06.18] ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԲԱԿԱԼԱՎՐԱՏԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ԴԻՍՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼԸ

Այսօր մեկնարկել է բակալավրիատի 2018-2019 ուսումնական տարվա դիմորդների դիմում-հայտերի ընդունման երկրորդ փուլը, որը կտևի մինչև հուլիսի 2-ը ներառյալ: Այս մասին մեզ հետ զրույցում ասաց ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաչագան Գալստյանը:

[25.06.18] ԵՊՀ-ՈՒՄ ԶԻՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԲԱՑՎԻ

Այսօր ԵՊՀ ռեկտորը հյուրընկալել էր Զինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի պատվիրակությանը, որը գլխավորում էր ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնօրեն Սուն Զժուանչժին:

[26.06.18] Ի ՊԱՏԱՄԽԱՆ «ԺՈՂՈՎՈՒՐ» ՕՐԱԹԵՐԹԻ՝ 26.06.2018 Թ.-Ի «Ո՞Վ ԿԼԻՆԻ ՆՈՐ ՌԵԿՏՈՐ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ

2018 թ.-ի հունիսի 26-ին «Ժողովուրդ» օրաթերթը նյութ էր հրապարակել, որտեղ որպես կատարված փաստ են ներկայացվում մի շարք իրադարձություններ, որոնք իբրև տեղի են ունեցել ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանի մասնակցությամբ:

[26.06.18] «ԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԱՆՎԵՐՋ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՈՒԳԱԶՆՈՒ ՄՏԱԾԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ». ՏԱԹԵՎԻԿ ԶԱԼՅԱՆ

Տաթևիկ Զալյանը կրթությունը ստացել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: Այսօր նա սովորում է Իտալիայի Տրենտոյի համալսարանի ասպիրանտուրայում: Գերազանց ավարտելով ԵՊՀ-ն՝ Տաթևիկն այժմ ակտիվ գործունեություն է իրականացնում արտասահմանյան բուհում: Տրենտոյի համալսարանի ասպիրանտի հետ զրույցել ենք անցած ճանապարհի, այժմյան գործունեության և ԵՊՀ-ի մասին:

[26.06.18] «ԶՀԱՆՁՆՎԵԼ, ԼԻՆԵԼ ՄՈՏԻՎԱՑՎԱԾ, ՆՊԱՏԱԿԸ ԵՐԲԵՔ ԶԽԵՂԱԹՅՈՒՐԵԼ. ԱՅՍ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ՄԵՆՔ ԿՀԱՄՆԵՆՔ ՑԱՆԿԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ». ԵՊՀ ԱՄՊԻՐԱՆՏ ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ ասպիրանտուրայում սովորող ուսանողներից շատերն առաջին կուրսից սկսած դասավանդում են իրենց մասնագիտությամբ: Ուսանողական սեղանից մինչև դասախոսական աշխատանքի առաջին փորձեր. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայի 3-րդ կուրսի ուսանող Տիգրան Ղազարյանից փորձեցինք պարզել՝ ինչպես են անցնում դասավանդման առաջին քայլերը:

[26.06.18] «ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԼԱՎ ՏԵՂՆ Է». ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՎԱՐԴԱՆ ԱԼՈՅԱՆ

23-ամյա Վարդան Ալոյանը, ով պատրաստվում է առաջիկայում իր պարտքը կատարել հայրենիքի հանդեպ և մեկնել զինվորական ծառայության, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի շրջանավարտ է: Միջուկային ֆիզիկայի ամբիոնի սանը 2015 թ.-ից Միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպության (Ցեռն) հետ համագործակցող «LHC»-ի դետեկտորից մեկի՝ «CMS» խմբի անդամ է:

[26.06.18] «ՕՊՏԻԿԱՅԻ ԵՎ ՖՈՏՈՆԻԿԱՅԻ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԴՊՐՈՑԸ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ 3-րդ մասնաշենքի Կոնֆերենց դահլիճում ընթանում է «Օպտիկայի և ֆոտոնիկայի սահմանները» խորագրով դպրոցի 4-րդ օրը:

[27.06.18] «PRINTeL» ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՄԵԼՈՆԱՅԻ ԵՎ ՊՈՐՏՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

2018 թ.-ի հունվարից մեկնարկել է Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Erasmus+»-ի «PRINTeL» նախագիծը՝ «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում» Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով, որը համակարգում է Երևանի պետական համալսարանը:

[27.06.18] ԵՊՀ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Այսօր ռեկտոր Արամ Սիմոնյանն իր աշխատասենյակում ընդունեց Ռուսաստանից ժամանած պատվիրակությանը, որը գլխավորում էր Սանկտ Պետերբուրգի գիտության և բարձրագույն կրթության հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Իրինա Գանուսը:

[27.06.18] ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՑ ՄԻԱՅՆ ԴՐԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ ԵՆ ՄՆՈՒՄ. ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ-2018

Ամեն տարի՝ հունիսի 15-ից հուլիսի 27-ն ընկած ժամանակահատվածում, ԵՊՀ շրջանավարտները ստանում են իրենց դիպլոմները: Այսօր հանդիսավոր արարողությամբ իրենց ավարտական վկայականները ստացան Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտները:

[27.06.18] «ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍԻ ՇՆՈՐՀԱՆՐԵՍԸ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում այսօր տեղի ունեցավ «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի շնորհանդեսը, որին ներկա էին հանդեսի խորհրդի անդամները, դասախոսներ և ուսանողներ:

[28.06.18] «ԵՊՀ-ՈՒՄ ԲՈՂՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՎԵՆ». ԵՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆՐԱՊԵՏ Է ԵՊՀ-ՈՒՄ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ընդունել է ԵՊՀ-ում գիտակրթական բարեփոխումների նախաձեռնության անդամներին՝ քննարկելու ԵՊՀ-ում բարեփոխումներ նախաձեռնելու նրանց առաջարկները և դրանց իրականացման մեխանիզմները:

[28.06.18] ՄԵԿՇԱԲԱԹՅԱՆ ԴՊՐՈՑ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ. ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-2018» ԾՐԱԳԻՐԸ

Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի «Ամառային դպրոց-2018» ծրագրի բացման արարողությունը:

[28.06.18] 4 ԴԵԿԱՆՆԵՐԻ ՈՒ 31 ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ, ՆՈՐ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ, ԴՈՑԵՆՏՆԵՐ. ԹԵԺ ՔՆԱՐԿՈՒՄ ԵՊՀ ԳԻՏՈՐՀՐԴՈՒՄ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտխորհրդի հերթական նիստը, որի օրակարգում ընդգրկված էին ութ օրակարգային և մի քանի ընթացիկ հարցեր:

[29.06.18] 5 ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՄ ԱԲՐԱՀԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

«Եթե հնարավորություն ունենայի, չէի վարանի կյանքիս առաջիկա մի քանի տարին դարձյալ նվիրել գիտության այս ճյուղին՝ «Քաղաքագիտություն», «Տարածաշրջանային քաղաքականություն», «Արևելագիտություն», «Կրոնագիտություն», «Փիլիսոփայություն»:

[30.06.18] ՍՈՑՔԵՄՓ՝ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԵՊՀ-ՈՒՄ

Հունիսի 30-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում տեղի ունեցավ արդեն ավանդական դարձած ՍոցՔեմփը: Չորրորդ տարին է, ինչ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպում է այս միջոցառումը՝ հարթակ դառնալով հասարակագիտական թեմայով վերլուծությունների համար:

[02.07.18] ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԸ ՎԵՐՀԻՇՈՒՄ Է ԻՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

«Մենք բոլորս գալիս ենք մանկությունից, ինչպես մի մոլորակից». «Փոքրիկ իշխանի» հեղինակի՝ ֆրանսիացի գրող Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի թևավոր խոսքն է, որ խորհրդանշում է բոլորիս ակունք-արմատները:

[02.07.18] ՊԱՂԵՍՏԻՆԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում մեկնարկեց ՄԱԿ-ի մոդել-խորհրդաժողովը, որը կազմակերպել էին ուսանողները:

[02.07.18] ԵՊՀ-ՈՒՄ ՏՐՎԵՑ ՖՐԱՆՍԱՌՈՍ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Այսօր ԵՊՀ-ում մեկնարկեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ֆրանսախոս ուսանողների 7-րդ փառատունը:

[02.07.18] ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԾԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հուլիսի 2-7-ը ԵՊՀ առաջատար գիտաշխատող Արմեն Ներսեսյանի ջանքերով Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում կանցկացվի տեսական ֆիզիկայի ամառային դպրոց («2018 JOINT FAR/ANSEF-ICTP and RDP-VW summer school in theoretical physics»):

[03.07.18] «ՄԱՍՈՒՆՑԻՆԵՐԻՄ ԲՆՈՐՈՇ ԴՅՈՒՐԱԳՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ՀԱՃԱՄ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ԻՆՁ».
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, բազմաթիվ հուշամեդալների և պարգևների արժանացած Գեղամ Պետրոսյանը պատմում է իր արմատների և մեծ գերդաստանի պատմությունը:

[04.07.18] ՀՈՒԼԻՍ 15-ԻՆ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ 2018-2019 ՌԻՍՏԱՐՈՒՄ ՄԱՅՐ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ

Մայր բուհում բակալավրիատի 2018-2019 ուսումնական տարվա դիմում-հայտերի ընդունման երկու փուլով ԵՊՀ է դիմել 1.659 դիմորդ: Այս մասին մեզ հետ զրույցում ասաց ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաչագան Գալստյանը:

[04.07.18] «ՓՈՔՐԻԿ ՀՈՂԱԿՏՈՐ ՈՒՆԵԻՆՔ, ՈՐՏԵՂ ԿԱՆԱԶԵՂԵՆ ԷԻՆՔ ՑԱՆՈՒՄ, ՄԻՆՉԵՎ ՀԻՄԱ ԲՈՒՅՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՄ».
ԻԿՄ ԴԵԿԱՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վահրամ Դումանյանը պատմում է իր արմատների մասին: Նրա ծնողները Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղից են:

[04.07.18] «ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԿՍՏԵՂԾԵՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ՛ ԺԱՄԱՆԱԿԸ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ».
ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

Այսօր ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիպում սփյուռքահայ գրող, փիլիսոփա, գրականագետ Գրիգոր Պըլտեանի հետ:

[04.07.18] ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆ ՔԱՆԱԿԻ ԿՐԵԴԻՏՆԵՐ ԶՀԱՎԱՔԱԾ ԵՎ ՌԻՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԸ ԶՎՃԱՐԱԾ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ԿՀԵՈԱՅՎԵՆ. ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՄՓՈՓՎԵՑ ՔՆԱՇՐՁԱՆԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտորատի հերթական նիստը, որի ընթացքում ամփոփվեց 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը:

[06.07.18] ԲԻԶՆԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Այսօր Իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնն իր այս տարվա ուսումնական գործընթացն ամփոփեց դասախոսությամբ, որի հյուրը ԵՊՀ շրջանավարտ Մարինե Սիմոնյան Ազիզյանն էր, ով իր ուսումը շարունակել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում և հիմա աշխատում է որպես իրավաբան և դասախոսում է:

[06.07.18] ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԵՊՀ-ՊՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Այսօր ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում տեղի ունեցան ՀՀ ՊՆ «Հոգեբանություն» մասնագիտությամբ զինծառայողների վերապատրաստման դասընթացն ավարտելու համար տրվող վկայականների հանձնման արարողությունն ու «Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման ու զարգացման մեթոդներ» ձեռնարկի շնորհանդեսը:

[06.07.18] **ԵՊՀ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ԻՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ**

Այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնում Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտները ստացան իրենց դիպլոմները և երդվեցին բարձր պահել իրենց կոչումն ու անմնացորդ նվիրվել իրենց գործին:

[09.07.18] **«ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻՐՈ ԱՌԱՋԻՆ ԹՐԹԻՈՆ ԱՆՊԱՏԱՄԻԱՆ ՄՆԱՅ».** **ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՎԵՐՀԻՇՈՒՄ Է ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռուլանդ Ավագյանը ծնվել է այժմ աղբբեջանական օկուպացիայում գտնվող Գետաշեն գյուղում:

[10.07.18] **«ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ԱՐՁԱՆԱԳՐԵՄ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՎ ՈՒՆԵՑՈՂ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐ»**

Այս տարին առանձնահատուկ է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի համար: Լրանում է վերջինիս հիմնադրման 50-ամյակը: Ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը մեզ հետ զրույցում անդրադարձավ արխիվային նյութերին, նախատեսվող հոբելյանական միջոցառումներին, ինչպես նաև խոսեց ամառային դպրոցի մասին:

[11.07.18] **«ՏԱՏՍ ԳՈԳՆՈՑԻ ԳՐՊԱՆՈՒՄ ԿՈՆՖԵՏՆԵՐ ՈՒ ԶԻՐ ԷՐ ՊԱՀՈՒՄ ԵՎ ԱՄԵՆ ԱՆԳԱՍ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ ԲԱՐՁՐԱՆԱԼԻՄ ՏԱԼԻՄ ԷՐ ՄԵՋ».** **ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՎԵՐՀԻՇՈՒՄ Է ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր, ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Արթուր Սահակյանը ծնվել է Դիլիջան քաղաքում՝ ուսուցչի ընտանիքում:

[11.07.18] **ԵՊՀ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՇԱՏ ՀԻՄՆԱՎՈՐ ՊԱՏՃԱՌ**

Ինֆոգրաֆիկայի տեսքով ներկայացնում ենք, թե ՀՀ Կառավարության անդամներից քանի տոկոսն է կրթությունը ստացել ԵՊՀ-ում և որ ֆակուլտետներում:

[12.07.18] **«ԱՌԱՅԺՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՐ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐՈՒՄ».** **ԹՈՒՐՔԱԳԵՏ ԱՐԻ ՇԵՔԵՐՑԱՆ**

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում հուլիսի 9-ից մեկնարկել է ամառային դպրոցը, որի առաջարկած դասընթացների շրջանակում ուսանողները հնարավորություն ունեն բարելավելու առօրյա-խոսակցական թուրքերենը, ինչպես նաև սովորելու օսմաներեն:

[12.07.18] **ԾԱՐԿԱՁՈՐՈՒՄ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ**

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն», «Կենսաքիմիա», «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությունների 1-ին կուրսի, ինչպես նաև «Կենսաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի շուրջ 110 ուսանողներ Ծաղկաձորում մասնակցել են ուսումնական դաշտային պրակտիկայի:

[12.07.18] **ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՄԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԱՌԴԻՈ ՍՏՈՂԻԱ Է ԳՈՐԾԵԼՈՒ**

Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը և «Sound Progress» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Տիգրան և Արսեն Հակոբյանները ստորագրեցին համագործակցության հուշագիր, ըստ որի՝ սեպտեմբերից ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում գործելու է նորագույն սարքավորումներով հագեցած աուդիո ստուդիա, որտեղ նոր հմտություններ են ձեռք բերելու ուսանողները:

[13.07.18] **«ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՆՑՎԵԼ Է ԻՆՁ».** **ԵՊՀ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանը Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքից է:

[13.07.18] ԵՊՀ ԱՄՍԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր մեկնարկեց հանրապետության շուրջ 20 դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների համար Ծաղկաձորում կազմակերպված ամառային դպրոցը:

[13.07.18] ԳՅՈԹԻՆԳԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ «ERASMUS MUNDUS» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ Ա. ՄԱՐԳԱՐՈՎԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է «PICASA»-Ի ԵՊՀ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը մեզ հետ զրույցում անդրադարձել է կրթության միջազգայնացման ծրագրին և այդ գործընթացում ԵՊՀ-ի դերակատարմանը:

[16.07.18] ՀԱՅՏՆԻ ԵՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ներկայացնում ենք 2018 թ.-ին ԵՊՀ ընդունված դիմորդների ցանկը:

[18.07.18] «ԴԱՇՆԱԿԻ ՈՐԴԻ» ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՆՁ ԶՐԿԵՑԻՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻՑ». ՄԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՊԱՏՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բազմաթիվ մրցանակների ու պատվավոր կոչումների արժանացած, Եվրոպայի երկրաֆիզիկայի ասոցիացիայի անդամ, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարատ Գրիգորյանը ծնվել է Արարատի մարզի Այգեստան գյուղում:

[18.07.18] ԱՅՍ ՏԱՐԻ ԵՊՀ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ 1.446 ԴԻՄՈՐԴ

ԵՊՀ՝ 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության 1-ին և 2-րդ փուլերի արդյունքների համաձայն՝ համալսարան է ընդունվել 1.446 դիմորդ, որոնցից 311-ը սովորելու են պետպատվերի շրջանակում, իսկ 1.135-ը՝ վճարովի հիմունքներով: Այս մասին մեզ հետ զրույցում ասաց ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վաչագան Գալստյանը:

[19.07.18] «ՌՈՒՄԵՐԵՆԸ՝ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՊՀ-ՈՒՄ

Հուլիսի 18-ին ԵՊՀ ռուսական կենտրոնում տեղի ունեցավ «Ռուսերենը՝ երեխաների համար» խորագրով ամառային դասընթացների փակման արարողությունը, որի ընթացքում մասնակիցներն ու կամավորները վկայագրեր ստացան:

[20.07.18] ԼՈՒԹՍ ԵՆ ՏԵՄԵԼ ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՆՈՐ ՀԱՏՈՐՆԵՐԸ

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոգվածների ժողովածուի (2016 թ.) շնորհանդեսը:

[20.07.18] ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր տեղի ունեցավ «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» խորագրով ծրագրի արդյունքների ամփոփիչ միջոցառումը, որն իրականացվում էր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից:

[20.07.18] «ԼԱՎԱՇԻ ԱՆՈՒՇ ՀՈՏԸ ԶԳԱԼԻՄ ՄՏՈՎԻ ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ ԵՄ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ». ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՊԱՏՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բազմաթիվ պարգևների և հուշամեդալների արժանացած, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Էմիլ Գևորգյանը ծնվել է Երևանում՝ մտավորականի ընտանիքում:

[20.07.18] «ԴՈՒՔ ԵՔ ԼԻՆԵԼՈՒ ԱՅՆ ՀՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՆ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆԹԱՅԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ». ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՁՅԱՆ

Այսօր ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի շրջանավարտները հանդիսավոր արարողակարգով ստացան իրենց ավարտական վկայականները:

[20.07.18] ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ԴԴԼՈՄՆԵՐԸ

ԵՊՀ մեծ դահլիճում այսօր տեղի ունեցավ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

[27.07.18] ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԴԴԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի շրջանավարտները դիպլոմներ ստացան:

[30.07.18] 5 ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՄ ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԸ

«Կան մի շարք մասնագիտություններ, որ սպասարկում են ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ ոլորտներ»:

[03.08.18] ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐՎԱԾ Է ԵՊՀ ԶՈՀՎԱԾ ՈՒՍԱՆՈՂ-ԱԶԱՍՄԱՐՏԻՎՆԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԻՆ

Այսօր մեկնարկեց ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի անդամների ուխտագնացությունը դեպի Արցախ: ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուխտագնացությունն Արցախում շարունակվելու է մինչև օգոստոսի 9-ը:

[06.08.18] «ԱՆԹԵՐԻ ԵՍ ՈՒԺԵՂԻ ՔՈ ԴԵՐՈՒՄ». ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ՆՈՐ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Անիկ Մարգարյանը սովորում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտուրայում՝ զուգահեռաբար աշխատելով նաև ֆակուլտետի դեկանատում՝ որպես «Քաղաքագիտություն» և «Հանրային կառավարում» բաժինների գործավար:

[07.08.18] ԵՊՀ ԱՍՊԻՐԱՆՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԲԱՐՁՐ ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Էլմիրա Մելյանը մասնակցել է Բարձր Էներգիաների ֆիզիկայի եվրոպական դպրոցին, որն անցկացվել է հունիսի 20-ից հուլիսի 3-ը Իտալիայի Մարատեա քաղաքում: Էլմիրան մեզ հետ զրույցում պատմեց իր տպավորությունների և ձեռքբերումների մասին:

[10.08.18] ԼԵՀԱԿԱՆ ՇՈՒՆՉԸ ԵՊՀ-ԻՑ ՆԵՐՍ

Ազնիեշկա Վաշիչուկը լեհերենի դասախոս է, Հայաստան է գործուղվել Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի կողմից: Լեհերեն է դասավանդում Երևանի պետական համալսարանում, Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միությունում և «Պոլսկա Ռոդզինա» ընկերությունում:

[14.08.18] «ԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՀԱՃԱՆ ԷՒ ՄԻՐԱՀԱՐՎՈՒՄ». ՑԱԿՈՒ ՎՈՅՄԻԿ

2010 թվականից Երևանի պետական համալսարանը տարածաշրջանի մյուս 4 առաջատար համալսարանների հետ իրականացնում է «Մարդու իրավունքները և ժողովրդավարացումը Կովկասում» մագիստրոսական ծրագիրը, որի մասնակիցներից մեկը Լեհաստանից ժամանած Յակոբ Վոյսիկն է:

[16.08.18] 5 ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՄ ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

«Ընտրություն կատարելիս պետք է առաջնորդվել պետական շահով և աշխատաշուկայի տված հնարավորություններով»:

[21.08.18] «ՀՈՂԸ ԿԱՆՉՈՒՄ Է ԻՆՁ. ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՐԱԳԱՑՈՒՄ ԵՍ ԻՆՁ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՍ ԿՈԹԵՑԻ». ԳԱԳԻԿ ՂԱԶԻՅԱՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գազիկ Ղազինյանի արմատները Տավուշի մարզի Կոթի գյուղից են:

[24.08.18] **«SUSU ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԻՇՏ ԿԱԹԻ ՄԵՐ ՈՒ ՔԱՄԱԾ ՄԱԾՈՒՆ ԷՐ ՊԱՀՈՒՄ».** ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիացմունքով և անասելի հպարտությամբ է Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Նադաշ Մարտիրոսյանը պատմում իր արմատների մասին և նշում, որ հոր նախնիները Բիթլիսի նահանգի Խլաթի գավառի Ծղակ գյուղից են. «Վանա լճի ափին գտնվող չնաշխարհիկ այդ գյուղում, համոզված եմ, դեռ կանգուն է իմ պապենական տունը»:

[30.08.18] **ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐՆ ԸՆՏՐՎԵԼ Է ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ «ՄԵՏԱՔՄԵ ՃԱՆԱՊԱՐՀ» ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄ**

Հայկական մաթեմատիկական միության նախագահ, ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Յուրի Մովսիսյանը հուլիսի 23-26-ը մասնակցել է Չինաստանի մայրաքաղաք Բեյջինգում հիմնադրված «Մետաքսե ճանապարհ» մաթեմատիկական կենտրոնի դեկավար կազմի հանդիպմանը:

[30.08.18] **ԵՊՀ-ՈՒՄ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿԸՆԹԱՆԱ ԲՆԱԿԱՆՈՆ ՀՈՒՆՈՎ**

Այսօր ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռեկտորատի նիստ, որը վարում էր ռեկտոր Արամ Սիմոնյանը:

[30.08.18] **«ԱՌԱՋԻՆԿՈՒՐՄԵՑԻՆԵՐԻ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ».** ԵՊՀ ՈՒԽ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՊԱՏԱՄԽԱՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ

ԵՊՀ ՈՒԽ-ն օգոստոսի 29-31-ը իրականացնում է «Առաջին կուրսեցիների իրազեկման ծրագիրը»՝ օգնելով նոր ընդունված ուսանողներին համալսարանական կյանքը սկսել առավել իրազեկված և ինքնավստահ:

[31.08.18] **«ՉՂՋԻԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՇԵՐԸ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՐՆ ԵՊՀ ԴԱՄԱԽՈՍՆԵՐ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

Օգոստոսի 25-26-ը Հայաստանում 3-րդ անգամ նշվեց «Չղջիկների միջազգային գիշեր» խորագրով միջոցառումը: Այն կազմակերպել էին NABU-«Գերմանիայի բնության պահպանության միության» հայաստանյան մասնաճյուղը և «Կաթնասունաբանների հայկական ասոցիացիա» ԲՀԿ-ն:

[31.08.18] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ.** ԵՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՄԵՑԻՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԵՆ

Այսօր տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից կազմակերպված «Առաջին կուրսեցիների իրազեկման» եռօրյա ծրագրի վերջին միջոցառումը, որի ընթացքում համալսարանական կյանքի ու ուսումնական գործընթացների մանրամասներին ծանոթացան ԵՊՀ 6-րդ և 8-րդ մասնաշենքերում տեղակայված ֆակուլտետների ուսանողները:

[31.08.18] **ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ԿԻՆՈԴԻՏՈՒՄՆԵՐ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆՆ ԱՍՓՈՓՈՒՄ Է ԵՊՀ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ**

Այս տարի ամռանը ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը Հայ բանասիրության և Պատմության ֆակուլտետների հետ Ծաղկաձորում կազմակերպել էր ամառային դպրոց: